№ 191 ՈՒՐԲԱԹ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 191

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Սեպտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 4 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома .. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ԱՐՕՐ"

ԱՄՍԱԳՐԻ № 7—8-ի (յուլիս-օգոստոս)

1) ԺՈՐԺ ԴԸ ՊԱՐԻ	Գ. Բաշինջաղեան
2) ՀԱՐԱՒԱՑԻՆ ԲՈՒՐՄՈՒՆՔ	Ստ. Օհանեան
3) ԾՆՈՂԱԿԱՆ ՍԷՐ, Մարի Սանդէլի	Թարգմ. Լ. Դանիէլեան
4) ԵՐԵՔ ԾԵՐՈՒՆԻ, Լ. Ն. Տոլստոյի	» Ախպէրի
5) ԿԱՐԱ-ՕՂԼՈՒ, վէպ Բրջինի	» Մինաս-Ցոլակի
6) ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ... (բանաստ.)	Էմ-Օսի
7) ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԵՐԻ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ	Սարուխան
8) ԳԱԲՐ. Ք. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ	
9) ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ ՄԵՐ ՄԷՋ	Միք. Նաթանեան
10) ՄԵՐ ԳՐՈՂՆԵՐԸ (դիւցազներգուներ. Յովհ. Միրզայեան Վանանդեցի, Շիրոյեան Ղևոնդ ք., հ. Արսէն Բագրատունի)	Ե.-ի
11) ՄԱԿԱԲՈՅԾՆԵՐ	Վահ. Մամիկոնեան
12) ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ	Մ. Շովրեան
13) ՑԱՒԵԼՈՒԱԾ՝ Իննսուն երեքը, մեծ վէպ Վ. Հիւգոյի,	Թարգմ. Ա. Սաֆարեան

տա. 2—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
եւ ՄԱՆԿԱԿԱՆ
պարտէզ
Վ. եւ Ս.
ՍՄԲԱՏԵԱՆՆԵՐԻ

Պատրաստվում են երկսեռ երեխաներ բոլոր միջնակարգ դպրոցները մտնելու։ Յարմար բնակարան և ընդարձակ բակ։ Ամեն օր շարժական խաղեր, մարմնամարզութիւն։ Ձեռարուեստ։ Ընդունելութիւնը ամեն օր, ժամը 9—1-ը և 4—7-ը երեկ.։ Պասկեվիչի փողոց № 13.

(ա.օ.) տա. 824. 7—6

ՄԵՐՎԻ հայոց եկ.-ծխ. հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնելու ի պատասխան խնդրատու ուսուցիչների, թէ նա արդէն կազմել է իր ուսուցչական խումբը։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

(ա.օ.) տա. 858. 2—1

Երեւանի թեմ. դպրոցի համար հարկաւոր է բարձրագոյն կրթութիւն ստացած

ԲՆԱԳԷՏ ՈՒՍՈՒՑԻՉ

որն ունենալու է շաբաթական 24 դաս՝ 16-ը բնական գիտութիւնից և 8-ը թւաբանութիւնից։ Տարեկան ռոճիկն է 1480 ր.։ Ցանկալի է, որ խնդրատուները դիմեն հոգաբարձութեան հեռագրով, յայտնելով հարկաւոր տեղեկութիւնները և պայմանները։

Հերթապահ հոգաբարձու՝
Գեղէոն Ահարոնեան

(ա. օ.) տա. 859. 3—1

ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մենք հաղորդեցինք վերջին լուրերը Եւլախ-Շուշի երկաթուղու գծի կառուցման մասին։

Խնդիրը ներկայումս քննվում է Պետերբուրգում։ Թէ ինչ վախճան կունենայ նա, այդ չը գիտենք այսօր։ Բայց անկասկած ցանկալի է, որ խնդիրը ստանար դրական լուծում և վաղուց սպասված երկաթուղին սկսէր կառուցվել։

Չափազանց շատ և մեծ կորուստներ ունեն Ղարաբաղը և Զանգեզուրը երկաթուղիական գծի բացակայութիւնից։

Թէ գիւղատնտեսութեան, թէ հանքագործութեան և թէ վարչական կեանքի [illegible] ամեն օր յիշեցնում են [illegible] և յարմար հաղորդակցութեան [illegible]թեան մասին մեր երկրի այդ մասերի [illegible] Անդրկովկասեան երկաթուղու միջև։

Վերջին տարիներում այդ շրջանում ծրագրված են և [illegible]ագործվում են մի շարք ձեռնարկութիւններ։

Խոշոր դրամագլուխներ հանդէս են եկել շահագործելու հանքերը և անտառները։ Ընդարձակվել են բամբակի և ուրիշ բոյսերի մշակութիւնները։

Նախագծվում են ջրաբաշխական մի քանի ձեռնարկութիւններ։

Հաղորդակցութեան ուղիների աննպաստ և անմխիթարական վիճակը կանգնեցնում է շատ ծրագիրների իրագործութիւնը։

Հաղորդակցութեան անբաւարար վիճակը մտատանջութեան մէջ է դրել այսօր Զանգեզուրի ազգաբնակութեան մի խոշոր հատուածին, որը տարվայ բերքի պակասաւոր լինելու պատճառով ստիպված պէտք է լինի հայթայթել իր ապրուստը բերովի և գնովի հացով։ Իսկ հացի փոխադրելը Անդրկովկասեան երկաթուղուց մինչև Զանգեզուր կատարվում է շատ դանդաղ և պահանջում է մեծ ծախք։

Թէ բերքի և բազմառատ տարվայ արդիւնքների վաճառահանութեան և թէ անաջող տարվայ կարիքները լցուցանելու համար անհրաժեշտ է հաղորդակցութեան յարմար ուղիների ներկայութիւնը։

Եւ ամեն մի տարին, որ ուշանում է երկաթուղու կառուցումը, յետ է գցում երկիրը իր բարգաւաճումի հեռանկարից և խլում է աւելորդ աշխատանք ու ծախքեր երկրի ազգաբնակութիւնից իր տնտեսութիւնը վարելու միջոցին։

Եւլախ-Շուշի երկաթուղին հերթական ամենազգալի պահանջներից մէկն է մեր երկրում։ Նրա կառուցման անհրաժեշտութիւնը մանաւանդ զգալի դարձաւ վերջին հինգ-վեց տարիներում։ Եւ օր օրվայ վրա դիզվող երեւոյթները աւելի ու աւելի շօշափելի են դարձնում նրա կառուցման կարեւորութիւնը։

Այդ պատճառով ամեն մի դանդաղում և ամեն մի յետաձգում խնդրի մշակութեան ընթացքում ազդում է անախորժ և ծանր կերպով։

Բաւական ձգձգվեց խնդիրը։ Գոնէ այժմ ստանար վերջնականապէս բաւարար լուծում։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

Կիեվ.—Արքայազն Բորիսը, պսակ դնելով Ազատարար-Թագաւորի արձանի վրա, դիմելով Թագաւոր Կայսրին՝ ասաց. «Ձերդ Կայսերական Մեծութիւն, բոլգար ժողովուրդը խորապէս մեծարում է Մեծ Ազատարար-Թագաւորի սրբազան յիշատակը։ Ի նշան այդ յարգանքի, Նորին մեծութիւն բոլգարական Թագաւորի և բոլգար ազգի կողմից պսակ եմ դնում»։ Նորին Մեծութիւնը բարեհաճեց պատասխանել. «Ձերդ Թագաւորական բարձրութիւն! Շատ ուրախ եմ եւ չափազանց զգացված, որ Ազատարար-Թագաւորի արձանի վրա առաջին պսակը բոլգարական Թագաւորի եւ բոլգար ժողովրդի կողմից ձեր Թագաւորական բարձրութիւնն է դնում»։

Պետերբուրգ.—«Россія»-ում տպված է. «Ռուսական քաղաքների մայր Կիեվը տօնում է Ազատարար-Թագաւորի արձանի բացումը հանգուցեալի Թոռան ներկայութեամբ, որ շարունակում է Իր Պապի գործը, որ շնորհեց Արեւմտեան Ռուսաստանին զեմստվային ինքնավարութեան իրաւունքներ։ Սուրբ Օլգայի և սուրբ Վլադիմիրի մայրաքաղաքը, կործանվելով թաթարներից, գրաւվելով լիտովցիներից և լեհերից, 1686 թ. հիմնաւորպէս Կիեվը ընդմիշտ միացաւ Ռուսաստանին և կանգնած է Դնեպրի վրա իբրև ռուսական գործի արթուն յիշատակ։ Լիտովական իշխանութեան և լեհական թագաւորութեան պատմական վիճակները յայտնի են. ռուսական ցեղը Դնեպրի ափերին վերականգնեց իր թագաւորութիւնը և կուլտուրական նշանակութիւնը. Կիեվը վերստին դարձաւ ռուսական կուլտուրայի կենտրոն Արեւմուտքում, որ իր սրբերով և իր դպրոցներով միացրեց մի ռուս ցեղի երեք եղբայր ճիւղերին։ Սակայն նրանում միացվում են նաև շատ կուլտուրական կապեր, ռուսական ցեղը՝ լեհերի հետ, մշակվում են ընդհանուր պետական ու տնտեսական կեանքի սկզբունքներ, մի կեանք, որ վաղ թէ ուշ կը հովանաւորէ երկու սլաւօն ժողովուրդների, որոնք այնքան երկար՝ յուրախութիւնսլաւօնականութեանթշնամիների՝ թւում են անհաշտ։ Արեւմտեան զեմստվօ հաստատելը ընդարձակ ասպարէզ է տալիս ռուսների և լեհերի միահամուռ աշխատանքի համար՝ երկրի տնտեսականը զարգացնելու, իսկ ընդհանուր աշխատանքը— ինքնին մերձեցման լաւագոյն միջոցներից մէկն է։ Թող ուրեմն ոչ մի բան չը խոսվէ ուրախ հանդէսները [illegible] Ազատարար-Թագաւորի վեհանձն ոգին իր մեծահոգի Թոռան շուրջ բոլորէ Հարաւ-Արեւմտքի ժողովրդին հայրենիքի վառ սիրով և ամենահպատակութեան զգացմունքներով»։

Կիեվ.—Առաւօտեան Կայսրը, արքայազն Բորիսը և Մեծ Իշխաններ Անդրէյ Վլադիմիրովիչը և Սերգէյ Միխայլովիչը Պալատի և զինուորական մինիստրների և այլ պաշտօնական անձանց ուղեկցութեամբ մեկնեցին Կիեվից 40 վերստ հեռու զօրախաղերի։ Վերադարձին Կայսրն այցելեց Վլադիմիրեան կադէտական կորպուսը։

Վիլլէրսէկսէլ.—Կայօն, Կուիբան, Բէնուն, Մէսսիմին և օտարազգի օֆիցերները ներկայ գտնվեցին մեծ զօրավարժութիւններին։ Կայօն պատիւ ունեցաւ լինել Մեծ Իշխան Բորիս Վլադիմիրովիչի ներկայացուցիչը։

Օդեսսա.—Նաւահանգստում գործադուլը վերջացաւ։ Այլես նոր նաւաստիներ չեն ընդունվում։ Բոլոր նաւերի վրա պաշտօնի անցան հին ծառայողները։

Հէլսինգֆորս.—Լրագիրների ասելով, Մեխելինը հեռագիր է ստացել, թէ խաղաղութեան կոնգրէսը յետաձգվում է մինչև 1912 թիւը։ Բոլոր կուսակցութիւնների լրագիրները յայտարարում են, որ սեպտ. 1-ին բոլոր քաղաքացիները ժողովի են գումարվելու հերթական քաղաքական հարցի քննութեան համար։

Պեատիգորսկ.—Սեզօնը Ժելեզնովոդսկում փակվեց։

Պեկին.—Տեղական լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Ցզիչժօուի մօտերը անկարգութիւններ անողները հրդեհել են քրիստոնէական միսիան և սպանել են մի քանի միսիօնէրների։ Ձենդուֆույի հետ հեռագիրը խզված է։

Վիեննա.—Արժանահաւատ տեղեկութիւնների համաձայն, Սարաեվի զօրքի հրամանատարը նշանակվում է Շէյնախի յաջորդ։

Պրագա.—Չեխական հետևակ գնդի վարժութիւնների ժամանակ սպանվեց մի կապիտան, վիրաւորվեցին երկու օֆիցեր։ Վարժութիւնները դադարեցին։ Գունդը հեծելազօրի հսկողութեան տակ ուղևորվեց Պրագա։

Բիլբաօ.—Դրութիւնը շրջակայքում վտանգաւոր է։ Աշխատաւորները բոլոր հանքերում և գործարաններում կանգ են առել։ Սկսվեց երկաթուղային գործադուլ։ Շրջակայքից այլևս գնացքներ չեն գալիս։ Եկան 5,000 զինուոր։ Գործաթողների հետ ընդհարման ժամանակ զօրքերը կրակում էին։

Բերլին.—Գերմանիայի շատ տեղերում տեղի ունեցան աւերիչ հրդեհներ։

Ստոկհոլմ.—Շվեդիան և Նորվեգիան ճանաչեցին պորտուգալական հանրապետութիւնը։

Անտվերպէն.—Ֆերդինանդահայի փայտի պահեստներում սկսվեցին մեծ հրդեհներ։ Կրակի բոցերը երևում են Բրիւսէլում։ Այրվեցին ութ տուն. վիրաւորվեցին եօթ մարդ։

Հռոմ.—«Տրիբունան» հերքում է Կ. Պոլսից ստացված այն տեղեկութիւնը, թէ իբր Իտալիան ձգտում է բացառիկ տնտեսական տիրապետութեան Տրիպոլիսում։ Իտալիան պահանջում է միայն արդարացի վերաբերմունք դէպի իր շահերը։ Իտալիան թոյլ չի տայ, որպէսզի իտալահպատակները և Իտալիայի տնտեսական շահերը Տրիպոլիսում հաւասար չը լինեն միւս պետութիւնների շահերի հետ։

Պարիզ.—Լուվրից յափշտակված փիւնիկեան արձանները թագցնելու համար ձերբակալված Կօստրօվսկին ազատ արձակվեց։

Պարիզ.—Մինիստրների խորհրդի նիստում պարզվեց, որ 1912 թ. հացահատիկի քանակութիւնը բաւական կը լինի ազգաբնակութեանը կերակրելու, ար[illegible] բաւարարութիւն տալու և դաշտերը սերմելու համար։ Ֆրանսիայում անասուն այնքան կայ, որ առաջիկայ ձմեռ բաւական կը լինի երկրի պահանջին։

Պարիզ.—Երկրագործութեան մինիստրը, հիմնվելով գիւղատնտես պրօֆեսորների հաշիւների վրա, հրատարակել է այս տարվայ հացի բերքի հաշիւը։ Հնձել են 11.069.340 հեկտօլիտր, անցեալ տարվանից մօտաւորապէս 110 միլիօն պուդով աւելի։

Եկատէրինօդար.—Կալանաւորվեցին Մայկոպի պօստը կողոպտող աւազակախմբից վեց հայեր, որոնք Երևանի նահանգից են։

Լիսսաբօն.—Վիաննա-դօ-Կաստէլլօյում բացվեց միապետականների դաւադրութիւն։ Գրաւվեցին կարևոր փաստաթղթեր։ Շատ մարդ կալանաւորված է։

Ջագրէբ.—Արմատական սերբերը դուրս եկան ինքնուրոյն սերբական կուսակցութեան կազմից։

Կատանիա.—Էտնայի հրաբխատարանի վերատեսուչը հաղորդում է, որ շատ նոր հրաբուխներ են բացվել։ Լավան ծածկել է Էտնայի շուրջը գտնվող ճանապարհը. գիւղացիների տները քարուքանդ են եղել. երթևեկութիւնը անհնարին է։

ՄԱՐՕԿԿՕՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

Պարիզ.—Ֆէցից հաղորդում են, որ ախտիւսի ցեղը ֆրանսիական զօրքերի հեռանալուց յետոյ նորից կողոպուտներ է սկսել։ Շէրիֆի 600 զինուոր ենթարկվեցին այդ ցեղի յարձակման, որը սակայն յետ մղվեց կատաղի կռւից յետոյ։ Ախտիւսները խզել են հաղորդակցութիւնը Ֆէցի հետ և բռնել են պօստը։ Գնդապետ Բրէմօնը 1500 մարդով դիմել է Սէֆրու։

Պարիզ.—Հաւասը հաղորդում է, որ Դեսէլվը մինիստրների խորհրդում, ուր նախագահում էր Կայօն, զեկուցեց՝ թէ ինչ դրութեան մէջ են բանակցութիւնները Գերմանիայի հետ, և յայտնեց գերմանական կառավարութեանը յղած պատասխանի բովանդակութիւնը։ Հաւասը կարծում է, որ Դեսէլվի պատասխանը պարզ կը լինի Գերմանիայի շօշափած բոլոր սկզբունքային հարցերի նկատմամբ, առանձնապէս այն կէտի, թէ Մարոկկօյում բոլոր պետութիւնների տնտեսական շահերը լինելու են հաւասար և ապահովվելու է ֆրանսիական քաղաքականութեան ազատութիւնը։ Վաղը Դեսէլվը Ռամբուլիէում կը հաղորդէ Ֆալիէրին մինիստրների խորհրդի վճիռը։ Պատասխանը կուղարկվի Բերլին այս շաբաթվայ ընթացքում։

Մադրիդ.—Զինուորական մինիստրը Մելիլլայից տեղեկութիւն ստացաւ, որ թշնամու մի տեղ յարձակվել է սպանական բանակի վրա Կերտ գետի ափունքին։ Սպանացիք ունեն կորուստներ։

Պարիզ.—Դեսէլվը մեկնեց Ռամբուլիէ՝ ներկայացնելու Ֆալիէրին այն հիմունքները, որոնք պարունակվում են գերմանական կառավարութեանը ուղղված պատասխանագրի մէջ։

Մելիլիա.—Սպանացիք Կերտ գետի մօտ տեղի ունեցած կռւում կորցրին 18 սպանված և 77 վիրաւոր, մարոկկօցիները կորցրին 700 սպանված և վիրաւոր։ Կռիւը կատաղի էր։ Սպանացիք լիակատար յաղթութիւն տարան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 օգոստոսի

Ամօլ քաղաք.—Տեղական նահանգապետը թագնվեց ռուսական հիւպատոսական գործակալի տանը։ Հիւպատոսական գործակալի զուլամը պատմեց, որ մէջլիսի զօրախմբի 50 ձիաւորներ օգոստ. 27-ի կէսօրին մօտերը ույժով ներս խուժեցին Ուջարա, ուր ռուսաց դրօշակի պաշտպանութեան ներքոյ [illegible] Չը նայած հիւպատոսական գործակալի նամակին, ձիաւորները ջարդ սկսեցին։ Եղած գոյքը կողոպտվեց, էմիր-Մօքարէմի որդին զինաթափ արվեց և ազատ թողնվեց։ Ջարդի ժամանակ հիւպ. գործակալի սուրհանդակը ծեծվեց և ոտն ու ձեռքը կապած նետվեց ախոռը. մի քանի ժամից յետոյ նրան ազատեցին։ Յարձակման ժամանակ սպանվեց էմիր-Մօքարէմի ձիաւորը։

Օգոստ. 28-ին Ամօլ եկան մէջլիսի զօրամասից դարձեալ 150 մարդ, որոնց թւում մօտ 20 հայ՝ Տուլայի գործարանի ռուսական հրացաններով զինված, փամփուշտների առատ պաշարով։ Լուրջ կողոպուտների փորձեր, բացի ույժով ձի խլելուց, չեղան։

Մի փոքր զօրախումբ առաջացաւ գրաւելու Սարին։

Մահմէդ-Ալիի դէմ ձիաւորների առաքումը ձգձգվում է։

Երկու օր է Սավադկուխի շրջանում ճակատամարտ է տեղի ունենում։ Աջողութիւնը մէջլիսի զօրքերի կողմն է։ Սավադկուխը թշնամուց յետ է խլված։ Մազանդարանցիները յետ են նահանջում։ Մահմէդ-Ալին. թիւրքմէնների հետ հեռացել է բանակից անյայտ ուղղութեամբ։ Նրա առաջը կտրված է։ Դրութեան ծանրութիւնն ընկաւ Իզմայիլ-խանի վրա, որի հետ են Միրադ-խանի որդիքը։

Մէջլիսի զօրաբանակի պետ Սարդար-Մուխին 100 ձիաւորներով հասաւ Սարի։ Իզմայիլ-խանը, տանուլ տալով վերջին կռիւը, յետ է նահանջել անյայտ ուղղութեամբ։

Մահմէդ-Ալին, ինչպէս տեղեկացնում են, Խօզարջէրիբի վրայով անցել է Աստրաբադ։

Լօնդօն.—Րէյտէրի գործակալութեանը Թէհրանից հաղորդում են, որ էկս-շահը եօթ իւրայիններով փախել է Տիւմիւշթէփէ։

Թաւրիզ.—Ռահիմ-խանին խեղդելու լուրը չէ հաստատվում. նրան փորձեցին ույժով ստորագրել տալ մի քանի նամակ, ուղղված իր որդոց և ղարադաղցի խաներին, որոնց մէջ պահանջ էր դրվում չը պաշտպանել Շուջա-ուդ-Դովլէին։

Թաւրիզի պաշտպանների թիւը, շնորհիւ Թէհրանից իր ժամանակին ստացված դրամական օգնութեան, ամեն օր աւելանում է։ Գալիս են շատ [illegible]ներ Կովկասից։

Բարֆրուշ.—Հեռագիրները ուշացած են հեռագրաթելերի փչանալու պատճառով։

Մէջլիսի զօրախումբը հասաւ Ամօլ։ Զօրամասերի հրամանատարները նամակներով խնդրում են էմիր-Մօքէբէմից անմիջապէս Ամօլ գալ, սպառնալով հակառակ դէպքում քարուքանդ անել իր կալուածքը։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
31 օգոստոսի

Կ. Պօլիս.—Հայոց պատրիարքարանի ազգային ժողովը մի ընդարձակ յուշագիր մշակեց, որի մէջ մէկ առ մէկ բերված են այն բռնութիւններն ու ճնշումները, որոնց ենթարկվում են հայերը սահմանադրութիւնը հաստատվելու օրից ի վեր քիւրդերի և թիւրքերի կողմից։ Յուշագիրը կուղարկվի Բ. Դրան։

—

Կ. Պօլիս.—Զինւորական մինիստրը համաձայնեց պակասեցնել իր բիւջէն մի միլիօն ֆունտով։ Տարաձայնութիւնները կաբինէտի մէջ վերջացան։ Ճգնաժամի անմիջական վտանգը մեկուսացվեց։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Հայաստանի ճգնաժամը

Կ. Պօլիս, 25 օգոստոս

Ամէն կերպով աննախանձելի դրութեան մը մատնուած է այս պահուս մայր հայրենեաց թիւրքական բաժինին մէջ բնակող հայութիւնը։ Ամբողջ Հայաստանի մէջ կը տիրէ անստուգութիւնը և մահուան արհաւիրքը, և հայերը բնաջինջ ըլլալու վտանգին տակ են՝ շնորհիւ կարգ մը ցնորամիտներու ստեղծած ձգտումին... ընդմէջ հայ և քիւրդ ցեղերու։ Անցեալ օր առիթը ունեցայ տեսնուելու քիւրդ զարգացած ու լուսամիտ անձնաւորութեան մը հետ, որ իր ցեղին մէջ ալ ազդեցութիւն մը ունի, ինչպէս նաև պետական շրջանակի մէջ կարեւոր դիրք։ Այդ քիւրդը, հակառակ անոր՝ որ կը ձգնէր արդարացնել շատ մը մասամբ իր ազգակիցները, առանց ունէ վերապահութիւն դնելու, անսովոր անկեղծութեամբ մը խոստովանեցաւ ինծի, թէ արդարև Հայաստանի մէջ հայոց կեանքը վտանգի տակ էր։ Իր կարծիքովը՝ այս վտանգաւոր վիճակը առաջ եկած է երկու ազգերու մէջ ըստեղծուած ատելութենէ մը, որ աւելի կարծարծուի մասնաւորապէս դաշնակցական գործիչներու կողմէ։ Ինքը կը յայտարարէ, թէ, ստոյգ վիճակագրութեան մը համաձայն, 1878-էն սկսեալ մինչև սահմանադրութեան հռչակումը, մանաւանդ Համիդիէ գունդերու կազմութենէն յետոյ, քիւրդերու ձեռքը անցած է առնուազն 40,000 Մաուզէր և Մարտին հրացաններ։ Այս զէնքը կառավարութիւնը մտադրած է ետ առնել քիւրդական խլրտումի մը առաջին շշուկը ելլալէն ի վեր, սակայն կը պակսի այդ ոյժէն, որ վերջապէս արհամարհելի չէ, և անհունապէս գերազանց ալբանացիներու և հօրանցիներու զինուորական ոյժէն, քանի որ անոնց ձեռքը գտնուած զէնքերը լոկ նախնական պարզ զէնքեր էին և ոչ քիւրդերու ձեռքը գտնուածին կատարելութիւնը և ոչ թիւը ունէին։ Ասոր վրայ աւելցուցէք Պարսկաստանի և Ռուսաստանի ճամբով շարունակ ներմուծուած զէնքերը, որոնք ստուար մեծամասնութեամբ քիւրդերու ձեռքը կանցնին, կրնաք երևակայել, թէ քիւրդերը արդարև օսմ. կառավարութեան վարիչներուն մտահոգութիւն պատճառելու չափ ոյժ մը կը ներկայացնեն և, եթէ ուզեն, կրնան հայերը բնաջինջ ընել։

Իմ քիւրդ խօսակիցս դիտել տուաւ, թէ հայերը՝ փոխանակ, իբր բնակակից ու շահակից ազգ, պետութեան պատկառելի դարձած ցեղի մը բարեկամ մնալու, օսմ. կառավարութեան վստահելով, քիւրդերը իրենց դէմ գրգռեցին և ատելի դարձան աւելի քան թիւրքերը, զի կառավարութեան կողմէ իրենց տրուած բոլոր նեղութիւններուն և անհանգստութիւններուն շարժառիթը հայերն էին, ուստի անակնկալ մը չպիտի ըլլայ, երբ Հայաստանի մէջ ջարդ մը պատահի, այլ պարզ վրիժառութեան խնդիր մը, ըստ քիւրդական տրամաբանութեան։ Իմ քիւրդ խօսակիցս այսպիսի պատահականութիւն մը նոյն իսկ քիւրդերու համար աղէտ մը և դատապարտութեան արժանի բան մը համարելով հանդերձ՝ կուզէ, որ ասիկա տգիտութեան հետևանք համարելով՝ հայոց կողմէ այժմէայ լարուած դրութեան վերջ տալու միջոցներուն վրայ մտածուի։

Ինքը կը խորհի, թէ լաւագոյն միջոցն է հայ և քիւրդ մեբուսներէ խառն մարմնոյ մը յանձնել բոլոր հայ-քիւրդական վէճերու քննութիւնը և գալ իրաւախոհութեան մը։

Այն ատեն պիտի վերնայ երկու ազգերուն իրարու հանդէպ տածած ատելութիւնը և պիտի անհետանայ Հայաստանի մէջ ունէ արիւնահեղութեան հաւանականութիւն, որ այսօր կայ և կը մնայ, շնորհիւ որոշ գոյնի մարդկանց պոռոտախօսութեան և յախուռնութեան։

Իմ խորագէտ խօսակիցս, իբրև օժտուած քիւրդերու յատուկ տեսակ մը խորագիտութեամբ, խորապէս կը զարմանայ անզէն ժողովուրդի մը ցոյց տուած յախուռն ընթացքին համար... հանդէպ ժողովուրդի մը, որ կատարելապէս զինուած է։

Օրինակի համար՝ Մուշի հայերուն, Մուշի առաջնորդարանին և նոյն իսկ Կ. Պօլսոյ պատրիարքարանին ընթացքը Օսման փաշայի խնդրոյն համար՝ կատարելապէս ծիծաղելի կը գտնէ, երբ [illegible] շարժում մը և գրգռիչ ընթացք։

«Աւելի լաւ չէր ըլլար,—ըսաւ քիւրդը,—որ փոխանակ լրագիրներու մէջ ծանուցանելու և բողոքի հանդիսաւոր ցոյցեր ընելու և այս կերպով պահանջելու Օսման փաշայի պաշտօնանկութիւնը, աւելի լաւ չէր ըլլար գաղտնի հաղորդել կառավարութեան իրողութիւնը և ըսել, թէ, առանց գայթակղութիւն պատճառելու և հրապարակելու պէտք ձգելու, Օսման փաշան այլուր տեղափոխուի։ Այն ատեն կառավարութիւնը անշուշտ կընար, և ապահովաբար պիտի ընէր, վարչական տնօրինութեամբ մը այլուր փոխադրել Օսման փաշան և գոհացում տալ հայոց։ Դուք, ընդհակառակը, խնդիրը առաջին օրէն] իսկ հրապարակելով և աղմուկ յարուցանելով նախ կառավարութեան պրէստիժին հարուած մը տուիք, պահանջելով որ պաշտօնանկ ըլլայ պաշտօնատար մը ձեր պահանջումովը, բան մը որ կառավարութեան ծանր կուգար, և երկրորդ՝ աստուածացուցիք Օսման փաշան յաչս քիւրդին, որ յանձին այդ թաթարին իրեն պաշտպան մը և իր մտադրութեանց բարեկամ մը գտած ըլլալով՝ ի հեճուկս նոյն իսկ հայոց, իրենց կամքը առաջ տանելու համար, չպիտի թողուն, որ Օսման փաշան պաշտօնանկ ըլլայ։ Ասով օսմանեան կառավարութեան վարիչները կրկնապէս երկու սուրի մէջ պիտի մնան, պրէստիժի և արժանապատուութեան հարուածէն զատ՝ երկու ժողովուրդներու, մին անզէն և միւսը զինեալ, պահանջումին մէջ ընտրութիւն մը ընելու հարկին տակ մնալով։ Այս մրցումին մէջ յաղթանակը զինեալ ժողովուրդին մնալը աւելի հաւանական է կարծեմ»։

Այս վհատեցուցիչ և սպառնական խօսքերը խորունկ մտածութեան մէջ թողուցին զիս։ Մտածեցի, թէ արդարև այս խօսքերուն մէջ խորունկ ճշմարտութիւններ կային, անհերքելի իրողութիւններ և բացայայտ արարքներ։

Եթէ քիւրդը իր ազգային զգացումներուն անսալով՝ բովանդակ պատասխանատուութիւնը հայոց վրայ կը նետէ, ապա ինչ պիտի ըսենք Խարբերդի հայ-կաթոլիկներու առաջնորդ Իսրայէլեան եպիսկոպոսի նամակին, որ ուղղուած էր Մանկունի եպիսկոպոսի և այն միևնոյն ահազանգը կը հնչեցնէր՝ իր Արաբկիրի մէջ տեսածները նկարագրելով և դիտել տալով, թէ հայք անանկ ընթացք մը կը բռնեն, որ կը կատղեցնեն թիւրք խուժանը։

Նոյնպէս քիւրդերուն օսմ. կառավարութեան պատկառանք ազդելը ակներև է անով, որ՝ օրինակի համար՝ Մ. և Ց. օսմ. կօմիտէն խոհեմութիւն կը համարէ իր շարքերուն մէջ ընդունիլ քիւրդ աշիրէթներու պետերը, որ կուսակցութեան ապահովաբար պատիւ են բերեր, այլ ընդհակառակը զայն կը վարկաբեկեն։

Եթէ կօմիտէն չպատկառէր քիւրդերէն, ապահովաբար Ջավիդ-բէյ իր Հայաստան ուղևորութեան առթիւ իր խորին յարգանաց հաւաստիքը չպիտի փութար մատուցանելու... համբաւոր աւազակ Քէօր Հիւսէյին փաշայի, քիւրդ ցեղապետներու ամենէն արիւնարբուին և ամենէն գազանին, որուն հետ ձեռք թօթուելը չպիտի ուզէինք տեսնել... օսմ. նոր կառավարութեան վարիչներէն մէկուն, եթէ իրապէս անոնք կուզեն նոր վարչութիւնը հիմնել արդարութեան սկզբանց վրայ և նախորդ «կազմակերպեալ աւազակութիւն» որակուած կառավարութենէն տարբեր բան մը ըլլալ։

Դարձեալ Հայաստանի մէջ եթէ ջարդի մը ուրուականը իրապէս գոյութիւն չունէր, զարմանալի պիտի ըլլար կառավարութեան փութկոտութիւնը, որով զինուորական բաւական ստուար զօրութիւն մը կը համախմբէ Հայաստան, անշուշտ շփոթութիւններէ վախնալով։

Քիւրդերը շփոթութիւն կրնան յարուցանել միայն հայերը ջարդելով, և օսմ. կառավարութիւնը եթէ ասոր ընդդիմանալ կուզէ, Ուրմիոյ կնճիռէն զատ ուրիշ արտաքին միջամտութեան պատրուակ մը չը ստեղծելու համար է ապահովաբար։

Ճգնաժամ մը ևս անցնելու վտանգին տակն է հայկական հայրենեաց նշխարներուն պաշտպան ժողովուրդը, աւերակներու յաւիտենական բուն, որուն արիւնին ծարաւի դաւաճաններ զայն դէպի արիւնի լճակները կառաջնորդեն։

Այդ դաւաճանները, որոնք հազարաւոր ոսկիներ կորզեցին հայ հարուստին ու բուրժուային կոկորդին տակ դնելով... հայերը զինելու և ինքնապաշտպանութեան առաջնորդելու սուտ նպատակով... հարցուցէք, թէ գոնէ երկու հրացան կամ չորս ատրճանակ դրած են հայ գիւղացիին ձեռքը՝ ինքնապաշտպանութեան համար։ Բնաւ երբեք։ Իրենց ոսկորը, իրենց օֆիսները և անոնց մակաբոյծները կերակրած են միայն. իրենց գոյութիւնը արժեցնելու համար գրգռած են խուժանը... առանց զայն պաշտպանելու միջոցներուն վրայ մտածելու։

Կիլիկիոյ աղէտը մեր ձեռքերովը պատրաստեցինք... Հիմա ալ կուզենք Հայաստանի գիւղերը անգամ մը ևս կարմիր ներկել... միայն անոր համար, որ թիւրքին մտայնութիւնը և քիւրդին արիւնկզակ բնաւորութիւնը, հակառակ մեր դարաւոր բնակակցութեան՝ դեռ չսորվեցանք։

Ամենէն կոկոզավիզ «ազատականը», Գրիգոր Զօհրապ, դեռ անցեալ օր կը խոստովանէր պօլսահայ թերթի մը մէջ, թէ որչափ որ երկիրը սահմանադրական է, սակայն թիւրքը թիւրք է։

Լաւ չէր ըլլար, որ Զօհրապ քիչ մըն ալ իր համախոհները համոզէր, թէ «թագաւորը թիւրք է»։

Շաւայլ

ԹԻՒՐՔԱՀԱՅՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Կ. Պօլսում վերջերս տեղի ունեցող հայոց ազգային ժողովը որոշեց ուղարկել Բ. Դրան մի յիշատակագիր, որի մէջ բացատրված են թիւրքաց հայերի դրութիւնը և պահանջները։

Ազգ. ժողովը մատնացոյց է անում, որ հաւատարմութիւնը նոր ռէժիմին տատանվում է հայերի միջև, որովհետև թիւրքաց կայսրութեան հայաբնակ շրջաններում սահմանադրութեան վերածնութիւնից յետոյ անդորրութիւնը չէր ապահովվում մի ամսով անգամ։ Համաժողովը պահանջում է մի շարք զեղծարար պաշտօնեաների պաշտօնանկութիւնը, մի քանի քիւրդ շէյխերի աքսորը Փոքր Ասիայից, որոնք ահաբեկում են հայերին, քիւրդ յանցաւորների պատիժը, զինւորական ինքնապաշտպանութեան կազմակերպութիւնը իւրաքանչիւր հայ գիւղում՝ քիւրդերից պաշտպանվելու համար, քաղաքացիական տեսուչների նշանակումը և կտրականապէս արգելել քիւրդ շէյխերին հարկ ժողովել հայ գիւղերից։ Այն յատուկ պահանջից, որից պարզ երևում է դրութիւնը Փոքր Ասիայում, յիշատակագրի այն կէտն է, որը ապացուցանում է անչափահաս աղջիկներին մահմեդականացնելու արգելքի անհրաժեշտութիւնը օրէնսդրական կարգով։ Յիշատակագիրը աւարտվում է յոռետես եզրակացութեամբ. այդ բոլորը միայն պալլիատիվ միջոցներ են. միակ արմատական միջոցն այն է, որ զինաթափ անվեն բոլոր քիւրդերը կամ զինավորվեն բոլոր հայերը։ («Р. В.»)

ՆԱՄԱԿՆԵՐ ՂԱՐԱԴԱՂԻՑ

II

Յեղափոխականների Ղարադաղից հեռանալուց յետոյ մնացին տեղացի անկարգները յեղափոխական անուան տակ, իրենց գլուխ ունենալով Խանագեահ գիւղի Յակովբ վարժապետին, որի համար ասում են, որ երբ թէ աւարտել է Թաւրիզի Լիլավայի դպրոցը։

Գործողների այդ խմբակը, քաջ տեղեակ լինելով որ ինչ էլ որ անելու լինի իրանց «էշին չօշ ասող» չէ լինելու, սկսեց Ղարադաղում—Աստուծուց անգամ մոռացված այդ «խոփթ» երկրում—նոյն սխրագործութիւնները կատարել, ինչ որ Խանասորի արշաւանքից յետոյ Սալմաստում մնացած ենիչէրներն էին անում։

Կանգ չառնենք տականքների այդ խմբակի մանր գործունէութիւնների վրա. մանրամասն չենք ուզում նկարագրել Ղուլուղի գիւղի դէպքին միջամտած տէր-Կորիւնի գլխին խաղացված խայտառակ օյինները, կանանց բռնաբարութեան դէպքերը (Թումանեանների գիւղում), Ամրաղուլ քեօխվայի մահափորձը, Բէյլանի գիւղերից յեղափոխական անուան տակ հաւաքվող «թալջին», Վինայում Թումանեանների շինելիք ջրաղացի փոխարէն նոյն տեղում և նոյն նիւթերով (մատերիալով) գնացող-եկողների համար երկյարկանի «ամարաթ» շինելը, Գերմանուից հրացան տուգանք առնելը և այլ և այլ հազար ու մի այդպիսի մեծ ու պստիկ երևոյթներով չենք ուզում լրագրի առանց այն էլ սուղ էջերը լցնել. ուզում ենք բերել մի քանի օրինակներ միայն, պարզելու համար թէ ինչպէս շահագործման է ենթարկվել Ղարադաղի խեղճ ու կրակ ժողովուրդը, ինչ օրեր է տեսել և ինչպէս է հիմա թալանվում ու կողոպտվում։

Տականքների այդ՛ խմբակն իր սոր գործունէութիւնն այն աստիճանի հասցրեց, որ սկսեց սպանութիւններ ևս անել. ահա մի այդպիսի անտակտ սպանութեան զոհ գնաց Ղուլուղի գիւղացի ծերունի Բաղալը (70 տարեկան), արհեստով ջրաղացպան. սպանութիւնը եղաւ ամենամեծ, ամենայարմար և [illegible] առիթը Ղուլուղի գիւղը քարուքանդ անելուն, որի մանրամասնութիւնները ժամանակին հաղորդվել են թերթիդ միջոցով, բայց դժբաղդաբար ոչ իսկական աստառով։

Այդքանով չը բաւականանալով՝ մատաղ սերնդի դաստիարակ Յակովբ վարժապետը և գործակալական խորհրդի անդամներ Յովհաննէս Յովսէփեանն ու Զաքարիա Դանիէլեանը կազմում են մի ցուցակ՝ անհատական հողի վրա սպանելու մի շարք քեօխվաների, որոնք երբեմն իբրև թէ «խաների մարդիկ» են եղել. դրանց թիւը 15-ից աւելի է։ Բայց նախքան անմիջապէս սպանութեան դիմելը՝ նրանք ծրագրում են «տակտով» գործել, առիթը ստեղծել տալ։ Այդ առիթը շանտաժական պահանջներն են։

Առաջին փորձը կատարվեց Խանագեահցի Մարտիրոս քեօխվայի վրա, որին մի շարք կեղծ կարմիր կնիքներով շարունակ «զգուշացրել են»...

Գործակալական խորհրդի անդամ Յովհաննէս Յովսէփեանը գիշերվայ ժամը 11-ին իր օգնականի հետ, առանց խղճահարվելու յղի կնոջ թախանձանքներից անգամ, ատրճանակը քաշած Մարտիրոս քեօխվից ստանում է 25 թուման (50 թուման էր ուզել) և դուրս գնում. պէտք է երևակայել յղի կնոջ և մանր-մունր երեխաների դրութիւնը, լացն ու կոծը այն րոպէին, երբ իրանց հայրը մահվան դռանն էր կանգնած. եթէ չը տար՝ անպայման սպանվելու էր. այդպէս էր որոշվել։ Չը մտնենք մանրամասնութիւնների մէջ։ Դէպքը ցնցող էր և անտանելի։ Սպասվում էր սոսկալի արիւնահեղութիւն, բայց շնորհիւ ազգային գիւղերի կառավարիչ և թեմական խորհրդի անուանական ներկայացուցիչ Յովհաննէսբէկ Կարապետեանի ուժեղ միջամտութեան՝ այդ սպասվող եղբայրասպան կռիւը Ղարադաղում հաշտութեամբ վերջացաւ, մինչդեռ դէպքի և նման այլ սխրագործութիւնների նկարագրութիւնը Թաւրիզի թերթերից մէկում, Թաւրիզում վերջացաւ դրամա-մահափորձով Ալ. Տէր-Վարդանեանի կեանքի դէմ, որ թոյլ էր տուել աղոտ վարմունքները արձանագրել թերթերում։

Վերոյիշեալ բոլոր եղելութիւնների հանդէպ Թաւրիզից խրախուսանքի նամակներ ստացվեցին։

Նամակներից մէկում,—որ Յակովբ վարժապետը կարդաց Խանագեահի մի բազմամարդ ժողովում,—ասված էր. «Մենք մեր շանտաժիստ ընկերոջ եղունգն անգամ չենք փոխի խանագեահցիների հետ»։ Չենք ուզում հաւատալ, որ Թաւրիզից էին այդպէս գրել, բայց գրվածը կարդացվեց և լսեցինք։ Պարզ է ուրեմն, որ այդ պարոնները աւելի առաջ պիտի գնային իրանց սխրագործութիւններում։

⁂

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԳՈՒՇԱՑԷ՛Ք ԶԱՆԳԵԶՈՒՐՑԻՆԵՐ

«Մշակի» № 180-ում «Նոր կեանք» վերնագրի տակ Ս. Գարագաշ յայտնում է ընթերցողներին, որ մի խումբ երիտասարդներ, գլուխ ունենալով Յովհ. ք. Տէր-Գրիգորեանին, ինժ. Ա. Յովհաննիսեանին և Ն. Տէր-Յովհաննիսեանին, գնացել են Ղուբա գաւառի Խաչմազ կայարանի մօտերքում գտնվող մի քանի մասնաւոր կալուածներ դիտելու՝ Զանգեզուրից անհող գիւղացիներ տեղափոխելու համար այնտեղ։ Ս. Գարագաշ յայտնելով այդ միսիայի մասին՝ իր կողմից աւելացնում է, որ տարիներ առաջ կառավարութիւնը Ռուսաստանից գաղթող գիւղացիութեան համար տեղ և յարմարութիւններ տալով [illegible] գաղթականներն անկարող եղան այնտեղի կլիմային դիմանալ, ուստի և ամեն ինչ թողին և հեռացան՝ վնասներ կրելով։

Որովհետև այստեղ մի կենսական հարց է շօշափվում մեր սակաւահող զանգեզուրցիների համար, մենք, որ քանի անգամ եղել ենք այդ կողմերում և ծանօթ ենք այդ տեղերին, պարտք ենք համարում այդ առիթով մի քանի խօսք ասել։

Վերջին երեք տասնամեակում Անդրկովկասի հայ գիւղացիութիւնը՝ գլխաւորապէս լեռնային մասերում՝ Զանգեզուր, Աբարան, Շիրակ, սակաւահողութեան, անբերրիութեան և տգիտութեան պատճառով տնտեսապէս քայքայվել է այն աստիճան, որ խեղճ ու կրակ հայ գիւղացին իր գոյութիւնը պահպանելու համար՝ պանդխտութեան ցուպն և գաղթականութեան է դիմում, մինչև անգամ գաղթելով Աբարանից Ամերիկա։ Բագուի գործարանների և նաւթահանքերի հայ բանւորութեան մեծ մասը զանգեզուրցիներ չեն։ Գաղթականութիւնը չէ հայ ազգի տունը քանդողը։ Բայց ինչ ենք արել մենք այդքան ձիգ տարիների ընթացքում և ինչ ենք անում այժմ ռանչպար գիւղացու, հողագործ գիւղացու դրութիւնը բարելաւելու, որ նա յուսահատված գաղթականութեան չը դիմի։ Մենք միայն սիրել ենք եկեղեցին և նրա մէջ գտնելով մեր փրկութիւնը՝ աշխատել ենք աւելացնել նրա քանակը։ Աշխարհին զարմացնելու համար՝ փառահեղ եկեղեցիներ ենք կառուցանում Պարիզում, Եալթայում և այլն։ Ոյժ ենք տուել ծխական խեղճ ու կրակ դպրոցներին և գրաճանաչ դարձնելով հայ մանուկներին՝ կարծել ենք, թէ հայ գիւղացիութեան փրկութիւնը միայն դրա մէջ է։ Եկեղեցի և դպրոց, դպրոց և եկեղեցի—ահա մեր դէվիզը։ Իսկ թէ գիւղացին ուտելու հաց ունի՞, հողը պարարտացնելու, վարելու, ցանելու, հնձելու, կալսելու դիւրին ձևը գիտէ՞. գիտէ՞ ազնուացնել իր անասունների տեսակը։ Արժէ՞ դրանց մասին խօսել. դրանք գռեհիկ հարցեր են։ Կարծում ենք, եթէ այս վերջին տասնամեակներում կարողանայինք հայ գիւղացուն գրաճանաչ դարձնելու հետ միասին տալ ձեռքը նաև նոր տեսակի երկրագործական գործիքներ, հողը պարարտացնելու, նրա հեշտ շահագործելու ձևը և այլն և այլն, գիւղացին արդէն սովորած կը լինէր դիւրին ապրելու ճանապարհը գտնել և այսօր դէպի Ամերիկա չէր գաղթի։ Գործունէութեան այդ պակասը զգացվեց միայն վերջին տարիներս, և գիւղատնտեսների մի խումբ, գլուխ ունենալով Ալ. Քալանթարին, կազմեց Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը. սկսեցին մտնել գիւղ, զրուցել գիւղացու հետ նրա կարիքների մասին, սովորեցնել գիւղական վարժապետին, և այդպիսով գիւղացուն կապել իր հողի հետ։ Շնորհակալութիւն այդ Ընկերութեան ղեկավարներին։

Ընթերցող, ոյժ տուէք, օգնեցէք այդ Ընկերութեանը, խրախուսեցէք թէ բարոյապէս և թէ նիւթապէս։

Գալով Գարագաշի յիշած տեղերին՝ Դերբու-ու, Ծատուրովի, Ղուկասովների և այլոց կալուածներին՝ զանգեզուրցի գաղթականների համար, կասենք հետևեալը։ Յիշված կալուածները, որոնք ընկած են Վլադիկավկազեան երկաթուղագծի վրա Խաչմազ կայարանից սկսած դէպի հիւսիս Մուշկիւր կոչված գաւառամասում, միանգամայն վնասակար են և կորստաբեր զանգեզուրցի գաղթականների համար։ Դրանում համոզվելու համար՝ հարկաւոր է գնալ և անձամբ տեսնել այն գերեզմանները, որոնք գոյացել են այդ վայրերում ռուս գաղթականներից ոչ հեռու անցեալում։ Ճիշտ է՝ հողը բերրի, արգաւանդ է, երկաթուղուն մօտ, բայց շնորհիւ կլիմայական աննպաստ պայմանի—մալարիայի—մեր գիւղացին այնտեղ չէ կարող առաջ գալ։ Մենք մեր ձեռքով նրանց համար գերեզման կը փորենք։ Հէնց այն հանգամանքը, որ այդ կալուածները, չը նայելով երկաթուղու մօտիկութեան, իրանց տէրերին օգուտ չեն տալիս, ապացոյց է մեր ասածին. մալարիայի շնորհիւ դաշտային աշխատանքի ժամանակ մշակներ չենք գտնի. տեղացի թուրքը՝ հիւծված այդ հիւանդութիւնից՝ անընդունակ է աշխատելու. ռուս մի քանի գիւղերը նոյնպէս ֆիզիքապէս ուժասպառ են եղել։

Ինկատի ունենալով այդ հանգամանքը, նախապէս շնորհակալութիւն յայտնելով յիշեալ մի խումբ յարգելի երիտասարդներին, գովելով հանդերձ նրանց բարի ցանկութիւնները, խորհուրդ կը տայինք նրանց՝ այնքան էլ չոգևորվել զանգեզուրցիներին այդ կողմերը գաղթեցնելու մտքով, աշխատել գիւղացուն չը պոկել իր հողից, այլ աշխատել այնտեղ, բուն երկրում, ի՛ր հողի վրա բարեկեցութիւն ստեղծել նրա համար և ո՛չ օտար երկրում, այն էլ այնպիսի մի տեղ, ուր վաղը միւս օրը մի փորձանք պատահելիս՝ չը կորչեն, կուլ չը գնան։ Այդպիսի դէպքերում աւելի լաւ է դիմել Թիֆլիսի Հ. Գիւղատնտ. և Տնայն. Ընկ.՝ իբրև աւելի ձեռնհաս մարմնի։ Մեր կարծիքով՝ աւելի յարմար տեղ գաղթականութեան համար՝ այդ Խօթայ վանքի կալուածներն են։

Պէտք է աշխատել գիւղացիներին այնտեղ տեղաւորել։

Զանգեզուրցի

Յ. Գ.—Հէնց նոր վերջացրի նամակս, երբ «Մշակում» կարդացի Ա. Աթանասեանի նամակը այդ հարցի առիթով, որտեղ զգուշացնում է զանգեզուրցիներին՝ չը գաղթել վերև յիշված տեղերը բնակութիւն հաստատելու համար։

Նոյն

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գիւղացու անել դրութիւնը

Ղալաչա, 24 օգոստոսի

Այժմ կարելի է ճշդօրէն ասել, թէ ղզղախեցի հայ գիւղացին որքան պաշար է տրնտեսել եկող օրերի համար. հնձի ժամանակ յուսով էր, թէ գոնէ տարվայ կէս պաշարը կունենայ, բայց կալերը կալսելուց յետոյ տեսաւ, որ ոչ թէ կէս տարվայ, այլ նոյնիսկ իր ցանած սերմն իսկ յետ չը վերցրեց, եղածն էլ վատ, ճմլված և սերմացուի բոլորովին անպէտք. հացը պակաս է ամբողջ գաւառում. այժմ Ղազախ քաղաքում ցորենի թաղարը ծախվում է 13—14 րուբլով. նոյն գնով ծախվում է գիւղերում. բայց ցաւալին այն է, որ օրէ-օր բարձրանում է հացի գինը. վատ են խաղողի այգիները, պակաս է խոտը, դարմանը, և ի ցաւ գիւղացիների հրաման եկաւ կառավարութիւնից, որ բոլոր ձմերանոցների դռները քանդեն, հակառակ դէպքում կը կրակվեն։

Դարերից ի վեր հայերն օգտվելիս են եղել այս ձմերանոցներից, թէև վերջին երկու տասնեակ տարին անուրդով են վերցնում. հայ գիւղացիներին բոլորովին ձեռնտու չէ ամբողջովին նուիրվել երկրագործութեանը, որովհետև սրանց վարելահողերն անջրդի են և միշտ ենթակայ բնութեան արհաւիրքներին։ Հայկական գիւղերի համար երկու կարևոր հարցեր կան, այն է՝ 1) անջրդի հողերի ոռոգումն և 2) ձմերանոցներից օգտվելը. սրանց դրական լուծումից է կախված հայ գիւղացու ապագայ երջանկութիւնը։ Բայց ով պիտի մտածէ այս կարևոր խնդիրների մասին, քանի որ մեր մէջ ձեռնհաս մարդիկ չունենք, գիւղացիք էլ դրսի աշխատողների սիրտը կերել են իրանց վատ արարքներով։

Երբ գիւղում կարդացի Գ. Մուրադեանի օգտաւէտ յօդուածը, բոլորն էլ զարմացական հարցերով դիմեցին. «Եթէ մեր հողերը կարելի լինէր ջրել, մենք վատ օր չէինք [illegible] ... րքան նի ու գուլլէն մեզ քար չի [illegible] անի։ ... համար, մեծ բարիք կը լինէր գիւղացիների[illegible] կրէր և եթէ Գ. Մուրադեանը նեղութ[illegible] ... է գիւղաշրջէր մեր գաւառը. ով [illegible] ... առաջ պիտի ցուն օգնած լինել, [illegible] պէս. իսկ նիւթանրան ապահովէ նիւ[illegible] կանալէս կապ[illegible] միայն այն ժամանակ, երբ գիւղացի[illegible] վարելահողերը կը ջրվեն։

Ճիշտ է, որ մեր գիւղացիք հողի սակաւութիւնից ստիպված անխնայօրէն ոչնչացնում են անտառները, բայց երբ հողերը

Ջրվեն, այլեւս վերջինիս կարիք չի զգացվի, անասունը չի վնասվի։

Երկարատեւ էր այս տարի երաշտը, որից չորացաւ բուսականութիւնը. տաւարն այնքան սովեց, որ սարերից դէպի ձմերանոցները փախաւ. կթի կովերն ու գոմէշները կաթից կտրվեցին, հորթերը մնացել էին բառաչելիս. այս տեսնելով՝ գիւղացիք քոչեցին ձմերանոցները այն յոյսով, որ նախկին տարիների նման կարող են անտառապետից իրաւունք ստանալ արածացնելու. գնացին, բայց մերժում ստացան. հրամայված է անտառապահներին իւրաքանչիւր օր տուգանքի արձանագրութիւն կազմել, նոյնիսկ դիմել պօլիցիային՝ տաւարն այնտեղից քշելու։

Տուգանքի երկիւղից շատերն ուզում են ծախել իրանց ապրանքը, բայց անասելի էժան է տաւարի գինը, որը մեծ վնաս է պատճառում քայքայված գիւղացուն։ Գիւղացու դրութիւնը անելանելի է, կարօտ օգնութեան։

Ֆօրստէր

Տանուտէրական ընտրութիւն Մեղրիում

Մեղրի, 23 օգոստոսի

Ամսիս 21-ին, 15 գիւղեր, որոնք անցեալում երեք տանուտէրութիւն էին կազմում, այդ մօտ 700 Թուրք-հայ ժողովուրդը տանուտէրական ընտրութիւն կատարեց, որի ընտրական կոմէդիան արժէ մի աւելորդ անգամ էլ արձանագրել՝ ցոյց տալով «Մըշակի» ընթերցողներին մեր գաւառի տըխուր իրականութիւնը։

Թեկնածուներ առաջարկվել էին՝ Ս. Բարխուդարեան, Սուլթան-Ալի, Ց. Խարմանեան և Ղ. Ղարիբեան։ Ձայների մեծամասնութեամբ Ղարիբեանը ընտրվեց տանուտէր։

Շինական դատաւորներ ընտրվեցին՝ Ց. Մելքումեան, Սուլթան-Ալի և Դ. Փարսադանեանց, որոնցից առաջին երկուսը անգրագէտ յուսալի մարդիկ են, իսկ վերջինը գրագէտ և լուրջ մարդ։

Երեքն էլ ճշմարտասէր մարդիկ են, միայն թէ զգուշանան գրագրի զանազան ճարպիկ խաղերից։

Նորընտիր գիւղախմբային տանուտէր Ղարիբեանը, որ նախկին տանուտէր Ս. Բարխուդարեանի հիւանդութեան պատճառով, իբրև կանդիդատ, մի քանի ամիս է վարում էր տանուտէրական պաշտօն, միացած ներկայ գրագրի հետ՝ ցոյց տուեց իր կարող ուժը։

Թեկնածուներից Խարմանեանը, որ 25 տարի ուսուցչական պաշտօն է վարել առանց աղմուկի և մի շիտակ, օրինակելի, ինտելիգենտ մարդ է, Ղարիբեանի պէս մի զօչաղի հետ 133-ի դիմաց ստանում է 70 ձայն։

Եփրեմ Վարդանեան

Օրէնքը կայ, բայց գործադրող՝ ոչ

Շուշի, 23 օգոստոսի

Սինոդի հրամանով կարգադրվեց, որ ամուսնացողները, նախ քան պսակվելը, բժիշկներից վկայական ներկայացնեն, որ իրանք առողջ են և կարող են ամուսնական կեանք վարել։ Այս հարցի մասին երկար խօսվեց լրագրութեան մէջ, բայց առ հասարակ նկատելի էր, որ նրա տուած արդիւնքը բացասական է։

Սինոդի կարգադրութիւնը տարածվեց միայն քաղաքների վրա, որտեղ գտնվում են բժիշկներ։ Գիւղերը առ ժամանակ ազատ համարվեցին այդ կարգադրութիւնից։

Ես, որպէս մի անհատ, մեծ նախանձախնդրութեամբ հետևեցի այդ խնդրին, տեսնելու, թէ որքան տոկոսն է որպէս հիւանդ բացասվում, իսկ քանի՛ տոկոսը, որպէս առողջ, պսակի թոյլտւութեան վկայական ստանում։ Իմ ձեռք բերած հաշիւներից երևաց, որ ոչ մէկն անգամ չէ ներմուծված որպէս հիւանդ, պսակվելու, ամենքն էլ առողջի վկայական են ստացել և պսակվել։ Պատահեցին աւելի ինձ մօտ ծանօթներ, և ես դրանց առաջնորդեցի բժիշկների մօտ սոսկ տեսնելու, թէ ինչպէս է բժիշկը քննում հիւանդին։ Իմ ուղեկցածներս երկուսն էին, առանձին-առանձին ժամանակ։ Բժիշկը նրանցից մէկի կրծքին դրաւ երկու՝ եղրները լայն խողովակ և փոքր ինչ լսելուց յետոյ՝ արձակեց պսակի թոյլտւութեան վըկայական, բայց յետոյ այդ մարդը, երկու տարուց վերջը, խելագարվեց, կինը շարունակ վիժում էր մանուկներ. սա էլ հիւանդացաւ. մարդը մեռաւ ծանր պարագաներում, իսկ կինը անզաւակ վերադարձաւ իր ծնողների մօտ։ Բժիշկը երկրորդին միայն հարցրեց, թէ երբևիցէ հիւանդացել է արդեօք. «ոչ» պատասխանից յետոյ, դարձեալ արձակեց պսակի թոյլտւութեան վկայականը, առանց նոյնիսկ լայն-եզրաւոր խողովակը նրա կրծքին դնելու։ Բժշկի նեղութեան վարձը վճարվում էր մի րուբլի, մարկայի՝ 75 կոպէկ։ Տեսնելով այս ամենը՝ ես մնացի հիասթափված, թէ ինչպէս կարելի էր առանց փորձեր անելու, հետևանքը [illegible]ելու՝ պաշտօնական այդպիսի կարգադրութ[illegible] անել և ժողովրդին ծանրաբեռնել [illegible] աւելորդ ծախսերով. և դեռ պահանջողներ [illegible] կային, որ օրիորդներն էլ ենթարկվեն բժշկ[illegible]ան քննութեան։

Պատահեց ինձ [illegible] լուրջ բան. ես գտնվում էի մի գիւղու[illegible] լսեցի, որ գործակալներից մէկը բոլոր [illegible]սակվողներից ժողովել էր մի-մի րուբլի [illegible] նեղութեան վարձը և 75-ական կոպէկ՝ մարկաների գինը, բայց դեռ չէր ստացել վկայականները։ Իսկ պսակվողները պսակված էին։ Միւս գործակալը ստացել էր րուբլիները և մարկայի փողը, թոյլ տուել տղաներին պսակվելու, բայց միայն շատ յետոյ ստացել բժշկի վկայականները։ Իմ հարցերին թէ բըժիշկը նախ քան վկայականներն արձակելը գիտե՞ր, որ տղաները պսակված են թէ ոչ, և ինչպէս է առանց պսակվողներին տեսնելու վկայականներ արձակել, գործակալը դժուարացաւ որոշակի պատասխան տալ։

Ուրեմն գեղեցիկ նպատակը նրանք դարձրել էին ձև, форма, որ ասեն, թէ ահա վըկայականները, էլ ինչ էք ուզում։

Այս տեսակ անհաջող, ապարդիւն իրողութիւններից յետոյ, աղաչէք խնդրեմ, ինչ նշանակութիւն ունեն բժշկի տուած վկայականները, և որքան գնահատելի է հոգևոր իշխանութեան արած այդ կարգադրութիւնը։

Չէ՞ որ փորձերը ցոյց են տալիս, որ մինչև այսօր հիւանդութեան պատճառով չեն արգելված մի կամ երկու պսակվող, էլ օգուտը այդ կարգադրութեան ո՞ր մասումն է գտնվում։

*

ՄԵՇՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Նոր-Բայազէտ, 25 օգոստոսի

Օգոստոսի 16-ին, դումայի դահլիճում կայացաւ մեր քաղաքի մեշչանական հասարակութեան երկրորդ ժողովը, որի զբաղմունքի առարկաներն էին՝ 1) «Ուչույուղլու» արքունական արօտատեղի կապալով վերցնելը քաղաքի հասարակութեան համար և 2) քաղաքի հասարակապատկան արօտների կարգաւորումը։

Նախ և առաջ պէտք է ասել, որ արօտների և խոտատեղերի կարգաւորումը և նրանց պահպանելու խնդիրը և այլ հողագործական պայմանները էական հարցեր են դառել վերջերս մեր ժողովրդի համար։ Նախկին տարիներում ոչ մի հետաքրքրութիւն չը ներկայացնող ընդարձակ արօտները այսօր կեանքի և մահու խնդիրներ են առաջացնում ժողովրդի զանազան դասակարգերի համար։ Այդ տեսակէտից ահա այդպիսի խնդիրները մեծ ազդեցութիւն ունեն հողագործ դասի ընտանեկան-տնտեսական դրութեան վրա։

Բանը նրանումն է, որ մեր քաղաքի խոտատեղերը, խոտը հաւաքելուց յետոյ, կապալով (աճուրդով) ծախվում են մեր քաղաքացի անասնավաճառներին, որոնք իրանց տաւար ու ոչխարները արածացնում են այդ խոտատեղերում երկու ամսվայ ընթացքում՝ մինչև ձիւն նստելը։ Նախկին տարիներում քաղաքի հասարակութիւնը կամ աւելի լաւ է ասել՝ մեշչանների հասարակական ժողովը արօտագին էր նշանակել եզան համար 60 կ., կովինը՝ 40 կ., իսկ ոչխարինը՝ 20 կ. իւրաքանչիւրին։ Այն ինչ՝ վերջին ժողովը այդ նորման մի փոքր փոփոխութեան ենթարկեց, այն է, ի նկատի ունենալով արօտների և խոտի առասպելական թանգութիւնը, արօտագին նշանակեց՝ 1) եզից վերցնել 80 կ., կովից՝ 60 կ., իսկ ոչխարից հին տակսայով՝ 20 կ. (տանու ոչխարը պէտք է արօտագին վճարէ 10 կոպէկ)։

Ժողովը առաջին հարցին մօտեցաւ դրական կերպով, այն է՝ մտնել աճուրդախօսութեան մէջ*) և կապալով վերցնել արևելեան Ուչույուղլու արքունի հողամասը, որով առաջիններում օգտվում էր քաղաքի հասարակութիւնը իբրև մի հողհասոյթ մեր նոր գաղթական հասարակութեան։ Ուստի ժողովը լիազօրեց նախագահ Ստ. Բաղիկեանցին, որը պէտք է օգոստ. 31-ին աճուրդախօսութեանը ներկայանայ և քաղաքի անունից կապալով վերցնի այդ խոտատեղը երեք տարի ժամանակով։

Ժողովում արտայայտվեց նաև մի ցանկութիւն, որ իւրաքանչիւրը իր քաղաքական պարտականութիւնը պիտի համարի ամեն կերպ ազդել աճուրդախօսութեան մէջ մտնող անձերին կամ գիւղականներին՝ յետ կենալ աճուրդախօսութիւնից յօգուտ տեղիս բնակչութեան։

Դրանից յետոյ ժողովը անցաւ երկրորդ հարցին, այն է «խոտի տակի արօտների» կարգադրութեան։ Հարցը դրված էր՝ ծախել թէ չը ծախել։ Պէտք է ասած, որ նախ քան ժողով գումարելը հասարակութեան մէջ շշուկ էր տարածվել, թէ արօտները աւելի լաւ է չը ծախել անասնավաճառներին (չօղարներ), այլ պահել հասարակութեան անասունները արածացնելու համար, քանի որ չօղարները երբ գնում են այդ արօտները՝ մինչև վերջին շիւղը կերցնելով իրանց հազարաւոր անասուններին՝ թողնում են լերկ գետինը միայն, որ եկող գարնանը մասամբ միայն խոտ է արտադրում։ Այն ինչ, երբ արօտները անարատ են մնում կամ մասնաւորապէս քաղաքի տաւարն է արածում, միւս տարի խոտի արդիւնաբերութիւնը կրկնակի եկամուտ է տալիս և այլն։ Մի խօսքով՝ ժողովի մի մասը տրամադրված էր, որ արօտները չօղարներին ծախելուց աւելի օգտակար է չը ծախելը, որովհետև նրանք մեծ վնասներ են հասցնում առ հասարակ խոտահարքին։ Սակայն զարմանալի թւաց, երբ ժողովում չը յայտնվեց մէկը, որ ձայն բարձրացնէր արօտները ծախելուն դէմ, ուստի բոլոր ժողովականները, որոնց մեծամասնութիւնը ի հարկէ անասնավաճառներ էին, երբ շահագրգռված տարր, միանգամայն կողմնակից էին ծախելուն, հետևապէս հարցը դրական կերպով վճռվեց։

Ապա սկսեց աճուրդախօսութիւնը։ Զանազան անձինք միմեանց հետ կոմբինացիաներ կազմած՝ աճուրդի մէջ մտան մօտ 6—7 պարտիաներ։

Քաղաքի աւագ Ստ. Բաղիկեան աճուրդ սկսեց 2,000 րուբլուց սկսած, որը բարձրացաւ մինչև 3,300 րուբլու, մի գին, որ երբէք տուած չէին մեր արօտներին, որոնց գինը 2,000-ի չէր հասել։

Մի կողմից արօտների բարձրանալը, միւս կողմից խոտի գների առասպելական թանգութիւնը՝ այս տարի մեր արօտների գըները նոյնպէս բարձրացրին առասպելական աստիճանի։ Արօտները կազմում են աւելի քան 6,000 դեսեատին տարածութիւն խոտատեղ, որի խոտը արդէն հնձված և հաւաքված է, և որի վրա՝ կապալով վերցրած անձինք՝ պէտք է բաց թողնեն արածելու անխտիր բոլոր անասնավաճառների տաւարոչխարները մինչև ձիւն նստելը՝ վերև յիշված տակսայով (արօտագին)։ Իսկ տաւարոչխարը կազմում են աւելի քան 10,000 գլուխ՝ երկուսը միասին վերցրած։

Այս տարի մեր արօտները աւելի թանգ գնով ծախվեցին և մի այլ պատճառով, այն, որ բազմաթիւ խոտատեղեր, մանաւանդ բլուրներ ու թեք տեղեր մնացել են առանց քաղելու, միւս կողմից վերջին յորդառատ անձրևներն էլ աւելի առատացնելով արօտները՝ մի հիանալի պատկեր ներկայացրին սարերին, որոնք նայողի ուշքն են գրաւում. կարծէք գարունը նոր բացված լինի և հազարաւոր անասուններ փռված այդ մարգագետիններում՝ անուշ-անուշ արածում են...

Ինչ վերաբերում է արօտների կապալագնի գործածութեան՝ ժողովը որոշեց 1,000 ր. տալ իբր օժանդակութիւն հայ ծխ. դպրոցին, իսկ մնացեալ մասը գործ դնել քաղաքային տան շինութեան պակասը լըրացնելու համար։

Ժողովը գոհ մնաց բոլոր որոշումներից։

Գ. Սինանեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ՊԷՏՔ Է ԹՈՂՆԵԼ ՕՐՄԱՆԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ *)

«Մշակը» (1897 թ. № 42) գրում է. «Կ. Պոլսի մեր թղթակիցը տխուր գոյներով նկարագրելով կոտորածից մնացած հայ որբերի վիճակը՝ յարձակվում է հայոց պատրիարք Օրմանեանի վրա, որ այդ պարզ մարդասիրական գործումն էլ ցոյց է տալիս աններելի անհոգութիւն»։

«Հազարաւոր տղաք 8—14 տարեկան գերման բողոքականաց և լատին կրօնաւորներու ձեռք անցած են... Օրմանեան, որ մազի չափ Համիդի խաթերը դպչել չուզեր»... Կարծում է տղաներին հովանաւորելով՝ սուլթանի խաթեր կը դպչի... «Բայց մի՞թէ Օրմանեան սիրտ և հաւատք ունի» («Մշակ» №№ 43, 47)։

«Standard» հաղորդում է. «Պատրիարքին կանչում են Բ. Դուռը, յայտնում են, որ Վանի քրիստոնեայ միսիօնարները պատրաստվում են 1200 հայ որբեր Եւրոպա ուղարկելու, այնտեղ կրթվեն։ Ի՞նչ տեղեկութիւն ունի ինքը։ Պատասխանում է, որ ինքը շատ անգամ սուլթանին աղերսել է հայ որբերի համար, բայց խնդիրը մերժել են. ուստի՝ Օրմանեան ստիպված էր միսիօնարների օժանդակութիւնն ընդունելու**)։ Պատրիարքի այս պատասխանի վրա սուլթանը հրամայեց յատուկ յանձնաժողով կազմել այս խնդրի համար։ Պատրիարքն առաջարկեց, որ ինքը 2 հայ պատգամաւոր ուղարկէ իր կողմից այդ յանձնաժողովին. բայց պատասխան ստացաւ, թէ աւելորդ է։ Ցիշեալ յանձնաժողովը արդէն գումարվել է և որոշում է կայացրել՝ արգելել օտար միսիօնարների միջամտութիւնը. և եթէ պատրիարքը անկարող է որբերը կրթել, նրանց պէտք է յանձնել մահմեդական բարեգործական հիմնարկութիւններին» («Մշակ» № 90)։

Նոյն խնդրի առիթով Բեռլինի լրագիրներին հաղորդում են Կ. Պոլսից «...Բազմաթիւ այրիներ և աւելի քան 40,000 որբեր պատրիարքից օգնութիւն են խնդրում։ Պատրիարքը դիմեց Բ. Դրան, խնդրելով թոյլ տալ հանգանակութիւն բանալ երկրի մէջ և երկրից դուրս յօգուտ հայերի. բայց Բ. Դուռը մերժեց, թէպէտ պատրիարքը յայտնեց, որ պատրաստ է ամեն տեսակ երաշխաւորութիւն տալ։ Պատրիարքը երկու անգամ նոյն խնդրով դիմեց Բ. Դրանը։ Կառավարութիւնը սակայն չը համաձայնեց ըստ երևոյթին հայոց պատրիարքարանի հայեացքների հետ» («Մշակ» № 126)։ Ահա թէ ի՛նչ արժէք ունէր Թիւրքական կառավարութեան առաջ շարունակ խնկարկող լեզուագէտ ու վարչագէտ Օրմանեան պատրիարքը։

Այս խնդիրը կարգի է մտնում, երբ Թիւրքաց իշխանութիւնը զգում է օտարականների ձեռքով Թիւրքիայում ապաստարաններ հիմնելու վնասակարութիւնը**) և երբ դրսից դրամական օգնութիւններ են ուղարկվում դեսպանութիւնների միջոցով (Զանշիեվ և ռուս. դեսպ.) հայոց պատրիարքին՝ հայ որբերին խնամակալելու նպատակով։

«Պապադաւանութիւնը հսկայ քայլեր է անել Հայաստանի և Կիլիկիայի գաւառներում. Նիկոմիդիայի գիւղերումն էլ շատ ընդարձակ ասպարէզ գտած է կաթօլիկ պրօպագանդան։ Օրմանեան բոլոր ոյժով բողոքեց, մինչեւ իսկ լաց եղաւ։ Բացատրութիւն է պահանջվել Ազարեանից։ Սա կտրուկ պատասխանել է. «Հայ ժողովուրդը միայն կաթօլիկ դառնալով է որ ետ կը կենայ յեղափոխական գործերից։ Միթէ պետութեան հաւատարիմ ծառայութիւն մի չէ՞, որ հայերը կաթօլիկ կը դարձնեմ»։ Բ. Դուռը սքանչացում է յայտնել Ազարեանին»։

Եւ այդ բոլորից պարզապէս երևում է, թէ ինչ դիրք ունէր Թիւրք կառավարութեան աչքում հայոց պատրիարք դիւանագէտ ս. Օրմանեան և թէ այդպիսի դիրքով ի՛նչ արժէք ու գին կարող էր ունենալ սուլթանի աչքում, Բ. Դրան առաջ...

Որ վարչագէտ Օրմանեանի օրօք հայոց պատրիարքարանը կորցրած է եղել իր ազդեցութիւն*) և արտօնութիւնները, պարզօրէն ապացուցվում է և նրանով, որ՝ ինչպէս գրված էր «Մշակի» № 153-ում՝ պատրիարք Օրմանեան՝ «դեկտ. 23-ին ներկայացրեց սուլթանին մի ուղերձ, որ բաղկացած էր 18 կէտերից... և առաջարկում է զանազան միջոցներ, որոնցով կարելի է վերականգնել պատրիարքարանի նախկին արտօնութիւնները»։

Որ հայոց երբեմնի խրոխտ և ազդեցիկ պատրիարքարանը դարձել էր սրբազան Օրմանեանի օրօք Թիւրքական մի հասարակ պաշտօնատարութիւն, այդ երևում է բացի վերոգրեալներից նաև այն դիրքից, որ բռնած էր սրբազան Օրմանեան հայկական ասված խնդրի վերաբերմամբ. քայլում էր ըստ ամենայնի Ելդըզըից տրված հրամաններով։

Օրինակ առաջին. «Թիւրքաց կառավարութեան դրդմամբ—հաղորդում է «Freie Osm. Post» լրագիրը,—հայոց պատրիարքը խմբագրել էր մի հովուական շրջաբերական, որ պէտք է կարդացվէր բոլոր եկեղեցիներում, բայց վերջին րոպէին Ելդըզի պալատից հակառակ հրաման ստացվեց»։

Օրինակ երկրորդ։ Սուլթան Աբդիւլ Համիդին մտահոգութիւն էր պատճառել Մինաս Չերազի Լա Հէյի վեհաժողովին դիմելու խնդիրը, ուստի պահանջում էր, որ հայոց պատրիարք ոչնչացնի նրա պաշտօնը, նրա միսսիան, պաշտօնապէս յայտնելով որ նա՝ Մինաս Չերազ «հայոց պատրիարքի կամ սրա ժողովի կողմից պաշտօն չունի». այսինքն՝ յայտնէ, որ «ես, թիւրքահայ ժողովրդի պաշտօնական ներկայացուցիչ պատրիարքս, սուլթանից կամ սրա կառավարութիւնից չեմ բողոքում, հետևապէս և ես չեմ խնդրում ձեր միջամտութիւնը կամ ուշադրութիւնը»։

Արդ՝ երբ ցաւերի տէրը, իրաւազուրկը, կողոպտված-ըկվածը, հայրենիքից վտարանդին ոչ միայն չէ բողոքում, այլ և գոհ է իրան զրկողից, ըկողից, մորթողից, տարագրողից, ի մի բան՝ «Օսմանեան գահուն փարած՝ ոչ ոքէ բան չպասեր», պարզ է, որ դրանով մերժում է դրսի օգնութիւնը, փակում է դրսի միջամտութեան ճամբան։

Եւ Օրմանեան սրբազանի 12 տարվայ պատրիարքութիւնը վերացրեց սուլթան Աբդիւլ Համիդի վրա ծանրացող կօշմարը, այն է՝ հայկական խնդրի պատճառով եւրօպական դիպլօմատիայի կողմից տեղի ունեցող հարցապնդումը, միջամտութիւնը։

Օրմանեան պատրիարքի 12 տարի վերառաքած աղօթքները, յայտարարած գոհունակութիւնները, մատուցած ուղերձները սուլթանին, փարված վիճակը համիդական իշխանութեանը՝ չէզոքացրին Բեռլինի դաշնագրի մէջ տեղ բռնած երաշխաւորութեան յօդուածը, ամրապէս փակեցին եւրօպական միջամտութեան ճամբաները, յուղարկաւորեցին մեր ազգային արժանապատւութիւնը, ջուր կտրել տուին մեր դատի համար թափված այնքան արիւնը, առանց զգալի թեթեւութիւն մտցնելու սուլթանի հայաջինջ քաղաքականութեան մէջ։

Ժողովուրդը, հայ ազգը ինչ իդէալ, բարոյական ինչ պատկեր պիտի կրելիս լինի, որ մեր նորագոյն արթնումի-զարթնումի հերոսներ՝ Ներսէս Վարժապետեանի, Խրիմեան Հայրիկի, Մատթէոս Իզմիրլեանի հետ հաւասար պատւի, հաւասար աստիճանի ու գնահատութեան արժանացնի նրանց արձակած կոչի, նրանց պարզած դրօշակի, նրանց վառած ջահերի, նրանց ապրումների ու ձգտումների ներհակութիւնն անձնաւորող, նրանց այնքան բուռն բողոքներով եւրօպական պետութիւնների մեզ վրա հսկելու համար բացած ճամբան խափանող, դուռը գոցող սրբազան Օրմանեանին...

Կարելի է արդեօք ողջմիտ դատողութեամբ միաժամանակ արժանաւորութիւն համարել հայ ներկայացուցչի, հայ պատրիարքի համար հայակեր սուլթանի դէմ ծառանալը, սուլթանի դէմ բողոքելը, պետութիւններին իրանց ստորագրութիւններով իրանց յանձն առած պարտաւորութիւններն յիշեցնելը և նոյն սուլթանի առաջ մէջք ծռելը, նոյն հայակեր սուլթանի խապառ չունեցած գթութեան ապաւինելը, պետութիւնների միջամտելու առաջ ճամբաներ գոցելը...

Կարելի է արդեօք անպաշտօն սրբազան Օրմանեանի հետ բոլէական տեսակցութեան ոսկեայ տպաւորութեան տակ թաղել, մոռացութեան տալ նրա 12 տարի պատրիարքական աթոռին «զամված-կառչած» սուլթանահաճոյ ընթացքը, «ինչ ալ որ ըլլայ ազգի վիճակը»...

Մեսրոպ ա.-ք. Մելեան

---

*) Այդ արօտատեղը կապալով տալու համար աճուրդ է նշանակված օգոստոսի 31-ին։

*) Տես «Մշակ» № 190.

**) Բայց ոչ թէ պատրիարքութիւնից հրաժարվելու։ Կարծես միսիօնարները հարցնում լինէին ս. Օրմանեանի կամքը կամ թոյլտւութիւնը։

***) Կ. Պոլսից հեռագրում են,—գրված է «Մշակի» 1897 թ. № 126-ի մէջ.—«Վերջին ունկնդրութեան ժամանակ սուլթանն իր դժգոհութիւնը յայտնեց հայոց պատրիարքին այն բանի առիթով, որ նա՝ պատրիարքը թոյլ է տալիս օտարահպատակներին յանձն առնել հայ որբերի հոգատարութիւնը, և ասաց, որ եթէ հայերը իրանք չեն կարող հոգ տանել իրանց որբերի մասին, այն ժամանակ ինքը՝ սուլթանը, որպէս բոլոր որբերի հայր՝ իր պետութեան մէջ, կը հրամայէ, որ մահմեդական գթասրտութիւնը հոգ տանի այդ թշուառների մասին»։ «Köln. Zeitung» հաղորդում է, թէ «սուլթանն ինքը զբաղվեց հայ որբերի համար որբանոցներ բանալու հարցով»։ («Մշակ», 1899 թ. № 110)։

*) «Օրմանեան նշանակել էր հոգեհանգիստ Նուպար փաշայի. հրաւիրել էր բոլոր դեսպաններին, մեծամեծներին, այլադաւան հոգևոր պետերին... ոչ ոք չէր եկել»։ (Թղթ. «Մշակ», 1897 թ.)։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մի քանի օրից յետոյ հիւր կը լինի Թիֆլիսում Պետական Դումայի անդամ Շինգարեովը։ Նա մտադիր է կարդալ դասախօսութիւններ մի քանի հերթական խնդիրների մասին։

◆ Մեզ հաղորդում են, որ սեպտեմբերի 15—20-ի մօտերքը տեղի կունենայ Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը, որտեղ կը կարդացվեն զեկուցումներ Ընկ. ամառային գործունէութեան մասին։ Ընկերութեան վարչութիւնը ներկայումս մշակում է ծրագիր աշնանային և ձմերային ամիսների գործունէութեան համար։

◆ Երէկ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան վարչութեան անդամները ուղևորվեցին Աշաղա-Սարալ՝ Մանթաշեանի կալուածքը՝ դիտելու ինքնաշարժ գութանի գործադրութիւնը և ծանօթանալու տնտեսական առանձնայատկութիւնների հետ։ Մենք կը տանք տեղեկութիւն այդ այցելութեան մասին։

◆ Օգոստ. 28-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Կովկասի Փոխարքայ Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովի պալատում հրդեհ ծագեց։ Շուտով պարզվեց, որ հրդեհը սկսվել է Փոխարքայի ննջարանում, կրակը անցել է հարևան նոր վերանորոգված սենեակի վառարանի անցքից։ Իսկոյն գործի կպան հրդեհը հանգցնելու՝ պալատի սենեակներում ապրող ծառաները, որոնք և կարողացան, մինչև հրդեհաշէջների գալը, հանգցնել կրակը։ Այրվեցին միայն մի քանի իրեր։

◆ Երէկվանից զանազան պետական հասարակական հիմնարկութիւններում պարապմունքները կատարվում են մինչև ց. ժամը 3-ը, օրինակ՝ պետական բանկի Թիֆլիսի գրասենեակում, Թիֆլիսի քաղ. վարչութեան մէջ, Նահանգապետի և Կովկ. ուսումնարանական շրջանի հոգաբարձուի դիւանատներում, իսկ պետական գանձարանը բաց կը լինի ժամը 9—2-ը։

◆ Այն տունը, որի մէջ գտնվում էին մինչև նոր շինութիւն անցնելը, Թիֆլիսի պօստային և հեռագրական գրասենեակները, և որը պատկանում է կոմս Լօրիս-Մելիքեանի ժառանգներին, այժմ գնել է Ազով-Դօնեան բանկի տեղիս բաժանմունքը 160 հազար րուբլով։ Տունը հիմնայատակ քանդվելու է, իսկ նրա տեղ կառուցվելու է նոր շքեղ շինութիւն յիշեալ բանկային բաժանմունքի համար։ Բանակցութիւն է վարվում, որպէս զի նոր շինութեան մի մասի մէջ գտնվի նաև Թիֆլիսի ազնուականների հողային բանկը։

◆ Տեղական ռուս և հայ թերթերի ասելով՝ սեպտ. 4-ին վերջվելու է պատերազմական դրութիւնը Թիֆլիս քաղաքում։

◆ Այսօր քաղ. ուսումնարանական մասնաժողովը վարժուհիներ է ընտրելու քաղ. տարրական դպրոցների համար։

◆ Այսօր կը գումարվի քաղ. ձայնաւորների ընտրողների կողմից ստացված բողոքները քննող քաղաքային մասնաժողովը։

◆ Թիֆլիսում ահա մի քանի օր է, որ օդը զգալի կերպով ցրտել է։ Ցերեկները արևի ազդեցութեան տակ լինում է բաւական շոգ. իսկ գիշերները ջերմաչափը իջնում է մինչև 9 և 8 աստիճանի ըստ Րէօմիւրի։

◆ Վերադարձան արտասահմանից Թիֆլիսի Արքունական թատրոնի վերատեսուչ գնդապետ Վ. Ի. Թամամշեան, Թիֆլիսի դատ. պալատի աւագ-նախագահ գ. խ. Լագօզա, Թիֆլիսի դատ. պալատի դատախազ գ. խ. Ա. Սիլին։

◆ Կարսի նահանգը մեկնեց՝ դիտելու կառուցվող ճանապարհները՝ ճան. հաղ. կովկասեան շրջանի կառավարիչ Գօֆմանը։

◆ Բժշկապետ Ցովհ. Գասպարեանը վերադարձել է Մանգլիսից, ուր գնացել էր ամարանոց։

◆ Վրաստանի էկզարխ Իննօկէնտի արքեպիսկոպոսը Թիֆլիս կը վերադառնայ վաղը։

◆ Վերադարձաւ և ստանձնեց իր պաշտօնը Թիֆլիսի քաղ. վարչութեան անդամ Կոկչյանը։

◆ Վրաց Դրամատիքական Ընկերութեան վարչութիւնը մի տարով վերցրեց Վրաց Ազնուականութեան թատրոնը ձմեռային ու ամառային շինութիւններով և այգով, ամսական 900 րուբլի վճարով։ Ընկերութեան վարչութիւնը, իր հերթին, «Նոր կլուբի» անդամների խորհրդին ձմերային շինութիւնը վիճել է ամսական 1000 րուբլով։

◆ Սեպտեմբերի 1-ից Թիֆլիսի էլեքտրաքարշի վերջին վագոնները գիշերով իրանց պարկն են մեկնում ժամը $11^1/_2$-ին։ Մինչև օրս նրանք հեռանում էին վերջին կանգնատեղից ժ. 12-ին գիշերվայ։

◆ Ժողովրդական Տանը վրաց սեկցիայի ներկայացումները կը սկսվեն սեպտեմբերի 4-ից։ Ռուսաց և հայոց սեկցիաներինն արդէն սկսվել է։

◆ Ռուսաստանի առևտրական շուկաներում վերջերս ալիւրի գները բաւականին բարձրացան։ Այդ հանգամանքը ազդում է, ի հարկէ, հացթուխների վրա, որոնք դարձեալ խնդրում են աւելացնել հացի սակագինը։ Մինիստրութիւնը կարգադրել է Պետերբուրգում յատուկ մասնաժողովի ձեռքով պարզել թանգանալու պատճառները։

◆ Մեզ խնդրում են տպել, որ Փիլօյեան առևտրական գիտելիքների դասընթացքներում այս տարի բացվել է կանանց յատուկ բաժանմունք։

◆ Թէլաւի մօտերը, «Т. Л.»-ի ասելով, նաւթի հետքեր են երևացել։

◆ Ղարայազից հեռագրում են, որ օգոստոսի 29-ի երեկոյեան անյայտ անձեր հրդեհել են մեծ քանակութեամբ խոտի դէզեր, որ յատկացված է եղել զինուորամասերի համար։

◆ Անանիա արքեպիսկոպոսի կարգադրութեամբ կաթողիկոսական պատուիրակների ընտրութիւնը Բագուի երեք եկեղեցիների ծխականների կողմից կայանալու է սեպտեմբերի 25-ին։

◆ Քութայիսից, օգոստոսի 31-ից, մեզ գրում են. «Քութայիսում յամառ լուր է պտտում, որ Փօթիի քաղաքագլուխ Նիկոլաձէն թողնում է իր պաշտօնը և անցնում է եւրոպացիներից կազմված մի խոշոր ընկերութեան գլուխ, որը Քութայիսում պէտք է զբաղվի գինու արտահանութեամբ»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 28 օգոստոսի

Ուրախ եմ, որ «Մշակում» տպված իմ նամակը՝ Էջմիածնի ճանապարհին, Ուլուխանլու կայարանում կորցրած ձեռագիր աշխատութիւններիս մասին՝ արձագանք գտաւ։ Այժմ շտապում եմ յայտնել ի գիտութիւն հայ գրականութեամբ զբաղվողների և իմ գրական վաստակներով հետաքրքրվողների, որ վստահելի բարեկամներից մէկը գտել է այդ ձեռագիրները մի պարոնի մօտ, Պարսկաստանում, և ես կարող եմ ստանալ, եթէ վճարելու լինեմ գտնողին 200 րուբլի։ Ես ամենայն ուրախութեամբ և պատրաստակամութեամբ կը վճարէի այդ գումարը՝ ինձ համար այնքան կարևոր և թանգարժէք ձեռագիրներիս կրկին տիրանալու համար, եթէ փող ունենայի, եթէ զուրկ չը լինէի նիւթական միջոցներից։ Ուստի հարկադրված եմ կոչ և դիմում անել Ռուսաստանում և արտասահմանում ապրող իմ ծանօթ-բարեկամներին և համակրողներին, խնդրելով նրանց՝ անհրաժեշտ զգացվող՝ աջակցութիւնը այս գործում։ Թող տան նուէր զոհողութեամբ և կամ պարտք՝ որոշ ժամանակին ինձնից մաս-մաս յետ ստանալու պայմանով։

Ո՞վ կանէ այդ լաւութիւնը։ Թող առաջ կանգնէ այդ բարեմիտը, որ իր սրտին մօտ ընդունելով հայ գրականութեան առաջընթացութիւնը և զարգացումը՝ հնարաւորութիւն կընծայէ ազատելու ձեռագիրներս կորստից և գեղեցիկ առիթ կը ծառայէ դնելու հասարակաց սեղանի վրա իմ «Ռուսահայոց և Թիւրքահայոց գրականութեան ամբողջական պատմութիւնը», որ բաղկացած է 25 հատորներից, մօտ 6000 մեծադիր էջերից և կազմված է նոր ուղղութեամբ, սիստեմատիկ կերպով, յաջորդական կարգով։

Ահա ձեզ հայ գրականութեան ընդարձակ և լրիւ պատմութիւնը, որի պահանջը վաղուց այնքան զգալի է դարձել մեզանում։

Գրիգոր Բալասանեան

—

Բաց նամակ դադարած «Կայծերի» խմբագրութեան

Շուշի, 26 օգոստոսի

Սրանով երրորդ անգամ խոնարհաբար խնդրում եմ «Կայծերի» խմբագրից, համաձայն «Մշակ» թերթի № 128-ում լոյս տեսած նամակի, ուղարկել ինձ «Կայծեր» լրագրի համար ինձանից ստացված մի տարվայ բաժանորդագինը՝ 3 ր. 50 կ., դուրս գալով երկու ամսվայ բաժանորդագինը։

Յովհ. Տէր-Ղազարեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ «Р. Вѣд.»-ն յայտնում է, որ արևելեան լեզուների Լազարեան ճեմարանի տեսչի պաշտօնի համար նշանակվում է Խր. Ի. Յովհաննիսեանը, որ մօտ 30 տարի դասատու է Լազարեան ճեմարանում։ Խր. Յովհաննիսեանը ունի մի քանի աշխատութիւններ, վերաբերեալ հին Հայաստանի հնագիտութեանը։

◆ Շուտով արդարադատութեան մինիստրութեան մէջ յայտնագործվելու է Թիֆլիսի դատ. պալատի դատախազի օգնական Սկօպինսկիի սպանութեան բոլոր մանրամասնութիւնը։

◆ «Սօյիզնիկները» Ռուսաստանի կողմից ուղղակի ամբաստանում են հեռագրերով և [illegible]րում են իր պաշտօնում թողնել Օդեսայի գեն.-նահանգապետ «Ժողովրդական» Տոլմաչեվին։

◆ Կիեվում «սօյիւզնիկները» երբ կազմեցին Մեծ հրապարակի վրա և անցնելիս պահանջում էին ամենքից գլխարկները վերցնել։

◆ Ժող. լուս. մինիստր Կասսօն, Կիեվի հանդէսները վերջանալուց յետոյ, երեք շաբաթով մեկնելու է Բեսարաբիայի նահանգը հանգստանալու։ Նրան փոխարինելու է իր օգնական Շեվեակովը։

◆ Ռուսաց պետական պարտքը առ 1 յունվարի 1912 թիւ. կազմում է 8.942,000,000 րուբլի։ 1912 թւին հարկ կը լինի վճարել տոկոսիք 375,701,000 րուբլի։ Իսկ նախահաշւում բոլոր սովորական ու արտակարգ ծախքերը հաշուած են 504 միլիոն րուբլի։ Վերջին 4 տարիներում պետական պարտքը պակասել է 71 միլիոնով։

◆ Միտրօպօլիտ Անտօնին այժմ բաւական առողջացել է. նա առանց կողմնակի օգնութեան փոքր զբօսանքներ է կատարում և ընդունում է այցելուներին։

◆ Վիտեբսկի նահ. դատարանը «Русское Знамя»-ի խմբագրին ենթարկեց 3 ամսով բանտարկութեան նահանգապետի հասցէին մի շարք զրպարտութիւններ տպելու համար։

◆ Եփրեմը Արշադ-Դօվլէին փառաւոր կերպով յաղթելուց յետոյ, բացի 300 գերիներից և 4 թնդանօթներից, գրաւեց նաև 3,000 թուման։

◆ Հրացանի բռնվելուց առաջ, Արշադ-ուդ-Դօվլէն խնդրեց իր դին ուղարկել իր կնոջը։ Նա իր կնոջ հասցէով թողել է մի նամակ հետևեալ բովանդակութեամբ. «Ես քեզ սիրում էի, քեզ համար էի կռւում. գնացի դէպի մահ կամ յաղթութիւն»։ Առաջին գնդակներից չը մահանալով, Արշադ-ուդ-Դօվլէն կրկնեց դարձեալ՝ «Կեցցէ Պարսկաստանի շահ Մահմէդ-Ալին...»։

◆ Պարսկաստանում կարծում են, որ էկս-շահը արդէն Օդեսսա է վերադարձել։

◆ Սալար-ուդ-Դօվլէն հարուստ վաճառականներից և կալուածատէրերից խոշոր գումարներ վերցնելով փոխադրեց եւրոպական բանկերը։

◆ Այժմ նոր դէպքերի պէտք է սպասել Թաւրիզի մօտերը։ Սալար-ուդ-Դօվլէն Ղազվինի վրայով գալիս է դէպի Թաւրէզ։ Մի քանի խաներ իրանց զօրքերով արդէն մօտեցել են քաղաքին։

◆ Մահվան պատժի ենթարկվեց Մահմէդ-Ալիի ջերմ պաշտպան աւազակ Նաիբ-Հիւսէյնը, որի խումբը ցիրուցան եղաւ։

◆ Թաւրիզում պաշտօնավարող ռուսաց հիւպատոսը արգելեց պատնէշներ շինել քաղաքում։ Պարսից կառավարութիւնը այդ առիթով բողոք ուղարկեց Թէհրան ռուսաց դեսպանին։

◆ Պարսից կառավարական զօրքերը գրաւեցին Բուրուջիրդը։

◆ Լուրերին նայած, էկս-շահը գտնվում է Սավադկուհի մօտ մի բերդի մէջ շահսէվանների պաշտպանութեան ներքոյ։ Կառավարական զօրքերը շրջապատել են այդ տեղը։ Կարծում են, որ էկս-շահին կարելի կը լինի ողջ ձեռք ձգել։

◆ Սալար-ուդ-Դօվլէն Մալախիրի մօտերը գլխովին ջարդեց բախտիարներին։ Կռիւը կատաղի էր։ Բախտիարների պարագլուխ Ձախալը փախաւ։ Գրաւվեցին շատ զէնքեր։

◆ Թիւրքաց մինիստրական ճգնաժամը դեռ չը հարթվեց։ Մեծ վէզիրի պաշտօնի համար կան երեք թեկնածուներ՝ Քեամիլ փաշա, Քիւչիւկ-Սայիդ և Հիւսէյն-Հիլմի։ Հարցը վերջնականապէս կը լուծէ երիտասարդ-թիւրքերի կոնգրէսը սեպտ. 17-ին Սալոնիկում։

◆ Խօլերան Թիւրքիայում արագութեամբ տարածվում է։ Ամբողջ երկիրը ճանաչվում է վտանգաւոր խօլերայից։

◆ Իտալական մամուլը շարունակում է փող հնչեցնել գրաւելու Տրիպօլիսը։

◆ Սպանական մի քանի պատերազմական նաւեր պատրաստվում են մեկնելու Մարօկկօ։ Ենթադրութիւն կայ, որ նրանք ռմբակոծելու են մի քանի անհանգիստ ցեղերի քաղաքները։

◆ Հօլլանդական մի քանի գնդեր հրաման ստացան գնալ գերմանական սահմանը,

◆ Տրէյդ-իւնիօնիստների կոնգրէսը նոյնպէս մի խիստ բանաձև ընդունեց ֆրանս-գերմանական բանակցութիւնների առիթով։ Իր բանաձևի մէջ կոնգրէսը կոչ է անում աշխարհի բոլոր բանւորներին բողոքել պատերազմի դէմ։

◆ Պարիզում և Բեռլինում յուզված ու սրված [illegible]թում։ Գները բօրսաներում շատ ընկել են։ Մամուլի և հասարակութեան տրամադրութիւնը չափազանց անհանգիստ է։

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

ԱՅՆ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ

Նեվրաստենիայով, սեռական թուլութեամբ, զառամութեամբ, իստէրիկայով, նեվրալգիայով, սակաւարիւնութեամբ, թոքախտով, սիֆիլիսով, սնդիկային բժշկութեան հետեւանքներով, սրտի հիւանդութիւններով (շաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պէրէբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումով, ալկոհոլիզմով, ողնածարի հիւանդութեամբ, կաթուածներով, հիւանդութիւններից առաջացած թուլութեամբ, յոգնածութեամբ և այլն:

Վաճառքի համար երեւան են եկել բազմաթիւ սակաւարժէք և առողջութեան համար վնասակար՝ մեր ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանող զանազան անուններով, բոլ որում, հիւանդներին մոլորութեան մէջ ձգելու համար, կեղծողներն իրանց ռէկլամների մէջ բերում են բժիշկների գիտողութիւնները մեր ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ մասին, վերագրելով այդ գիտողութիւններն իրանց կեղծիքներին: Ի նկատի ունենալով այդ, մենք պարտք ենք համարում այն անձերին, որոնք օգտվում են Սպերմինից, նախազգուշացնել այդ կեղծիքներից: Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ գիտողութիւնները գիտնականների և բժիշկների կողմից՝ արված ՍՊԵՐՄԻՆԻ փրկարար ազդեցութեան մասին, վերաբերում են բացառապէս ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, հետեւաբար և խնդրում ենք գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել **„ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ“** անուան և ֆիրմայի վրա, որովհետեւ ուրիշ պատրաստվածները ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք՝ ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ: Միակ իսկական Սպերմին ներկայանում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, արժէքը 3 րուբլի:

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար Սպերմինի մասին եղած հարուստ գրականութիւնը՝

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ

ՊՐՕՖԵՍՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ

Մատակարար **ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ** պալատի—Ս.-Պետերբուրգում, В. О., 7 лин. 18.

(П. 95413) 12—1

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

◆ Ֆրանսիական դեսպան Ժորժ Լուիի Պետերբուրգում ստացած վերջին ունկնդրութեան առիթով Պարիզում լուր է պտտվում, որ իբրև թէ ռուսական դիպլօմատիան բարեկամական միջամտութիւն գործ դնէ ֆրանս-գերմանական բանակցութիւնների մէջ, որպէսզի համաձայնութեանը նպաստէ։

◆ «Ջիօկօնդա» աշխարհահռչակ պատկերի յափշտակութեան մէջ կասկածվելով Պարիզում կալանաւորվել է գեղարուեստական քննադատ Վիլհէլմ Կօստրօվսկին, որ ծագումով ռուս է և գրում է Apolliner կեղծ անուան տակ։ Հարցաքննութեան ժամանակ Կօստրօվսկին յայտնել է, թէ ճանաչում էր փիւնիկեան արձանները գողացողին, որ իր մօտ քարտուղարի պաշտօն էր կատարում։ Կարծում են, որ Կօստրօվսկին միջնորդի դեր է կատարել արձանների վաճառման մէջ։

◆ Համարեա ամբողջ Մօնղօլիայում յուզմունքներ են մօնղօլների մէջ չինացիների դէմ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Ե

ԲԱԳՈՒ՝ **արագ № 2 գնացքը**՝ 9 ժ. 38 ր. առաւ., ւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր.- Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պօստատար № 4 գնացքը**՝ 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար № 6 գնացքը**՝ 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով ըստ հարկի կարեւորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր.: Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.,

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօստատար № $^{74}/_{75}$**՝ 1 ժ. գիշ. Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար. 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երեւան մտնելու): Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղեւորվում է Երեւան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երեւան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջեւան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ: **Մարդատար-ապրանքատար № $^{78}/_{79}$ գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երեւան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ **արագ. № 1 գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ: **Պօստատար № 3 գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար № 5 գնացքը**՝ 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով ըստ հարկի կարեւորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան:

ԲՈՐԺՈՄ՝ **մարդատար № $^{7}/_{8}$ գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար № $^{9}/_{10}$ գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար № 5 գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.: **Պօստատար № 3 գնացքը**՝ 9 ժ. 52 ր, առ.. **Արագ № 1 գնացքը**՝ 10 ժ. 24 ր.՝ երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար № $^{72}/_{73}$ գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.: **Մարդատար-ապրանքատար**՝ № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ № 2 գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան: **Պօստատար № 4 գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար № 6 գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ:

ԲՈՐԺՈՄԻՑ՝ **Մարդատար № $^{9}/_{10}$ գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար № $^{7}/_{8}$ գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան:

Ծանօթութիւն.—Բոլոր գնացքներով (№ 2՝ Թիֆլիս-Բաթում և № 1 Բաթում-Թիֆլիս) [illegible]

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐՍՐՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒՂԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՅ—$12^1/_2$—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—1—$1^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^1/_2$—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՅ—6—6^1/ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ **Բ. Նաւասարդեան**

3. 0—89

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։

Ընդունում է հիւանդներին՝

Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը:
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը:
Կուկիա, Սեմեօնովսկայա փողոց, № 16.
Տելեֆօն № 40.

(Ն.ու.կ.) 220. 100—68

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։

Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։

Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.

Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.

(ա. օ.) 669. 100—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԼՈՅՍ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ձրի դպրոցի I բաժանմունքի համար սկսված է հայ երկսեռ չքաւոր երեխաների ընդունելութիւնը։ Խնդիրները ծննդեան և ծաղկի վկայականների հետ միասին ներկայացվելու են վարչութեան նախագահ Ա. Աւագեանին հետեւեալ հասցէով. 4 уч. Абасъ-Абадская пл. домъ № 5.

(Կ.) 857. 2—1

Գերմ. համալսարանի

ՓԻԼԻՍՕՓԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՆԴԻԴԱՏ

(Գէորգեան ճեմարանաւարտ)

—◆ որոնում է յարմար **պաշտօն:**

Հարցնել «Մշակի» գրասենեակում։

(ա. օ.) 860. 4—1

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԿՐՕՆԻ

հետևեալ դասագրքերը.

Աշակերտաց համար

		Գինը	Զեղչ
1) Դասատետր կրօնի Ա. տարի	[illegible]	25	25%
2) » » Բ. »		20	
3) » » ա) Գ. »		25	
4) » » բ) Գ. »		25	
5) » » Դ. »		25	
6) Նոր-ուխտ Ե. »		45	
7) Գործք առաքելոց Զ. »		45	
8) Հին-ուխտ . .		50	
Ուսուցչաց համար			
8) Մեթօդիկա Հին-Ուխտի		1—65	35%
9) » Նոր-Ուխտի		2— 5	
10) Ուսուց. քրիստ. կրօնի Դ.		1—50	
11) » » » Ե.		—50	

Կարելի է դիմել

1) Ինձ (Бебутовская ул. № 20).
2) «Գիր» և միւս հայ գրավաճառներին։

Սահակ ա.-ք. Սահակեանց

(Ե.ու.) 786. 10—7

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Գ. ԵՒ Մ.

ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկօլաեվսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Դիւանատունը բաց է երեկոյեան ժամը 4—6-ը։

(ա. օ.) 818. 25—9

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

(Բազմաթիւ նկարներով)

Ա. ՄԱՍ, 3-րդ և 4-րդ տարվայ դասընթաց. 2-րդ տպագրութիւն, գինը՝ 60 կ.։
Բ. ՄԱՍ, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա, 5-րդ տար. դասընթաց. 2-րդ տպագրութիւն, գինը՝ 65 կ. (1-ին տպագր. կան սակաւաթիւ օրինակներ—30% զեղջով)
Գ. ՄԱՍ, Եւրօպա, 6-րդ տար. դասընթաց. 70 կ.։
Նոյնի—«Ուղղագրական բառգրքոյկ», 20 կ., «Հայրենագիտութեան ուսուցումը», 20 կ.։
Գումարով գնողներին բաւարար զեղջ։ Դիմել գրավաճառներին։ Պահեստը «Գիր» գրավաճառանոցում։ Կազմողի հասցէն՝ Թիֆլիս, Ներսիսեան դպրոց։

(Հ. ու.) 854. 2—2

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster. Comptoir-ում: Նիւթերն ամփոփում են ռէալ կեանքից: Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) **Օտար լեզուներ.** 2) ոճագրութիւն. 3) դակտիլօգրաֆիա (Րեմինգտօն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ: Բացվում է կանանց յատուկ բաժանմունք: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը սեպտ. 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը սեպտ. 1-ից առ. 10—12 և եր. 4—7 ժամը: Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում:

(Հ.ու.կ.) 861. 0—1 Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

Ըստ Գօլդենբերգի

Թւաբանութեան խնդիրներ եւ օրինակներ

ԳՐԻԳՈՐԻՍ Ա.-Ք. ԵՐԶՆԿԵԱՆՑԻ 30 կ.
I և II տարի, 9-դ տպագրութիւն, ընդունված . . . . . 35 կ.
III և IV տարի, 5-դ տպագրութիւն, ընդունված . . .
Պահեստը՝ Центральная Книжная Торговля.
Նոյնի՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, նոյնի տարրական դասագիրք. 60 կ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ աշխարհագրութեան [illegible]
(օմ.) 839. 4—3
[illegible]

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.